


ԾԵՐՈՒՆ ԹՈՐԱՌՍՅԱՆ

ԿԱՆԱԾ ԲԱՐՁՐՈՒՆԵԼՆԵ

91.542-32

Թ-87



1935 թ.

ՍԱՄԵԼԱԿՄԻ

91.542-32

Բ-81

11.11

ԾԵՐՈՒՆ ԹՈՐԳՈՄՅԱՆ

6 NOV 2011

ԿԱՆԱԶ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

(ՄԻ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՀԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ)

Նկարիչ՝ Գեվորգ Գրիգորյան

38986

179



ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԴԱՐԱՆ

1935

ԿԱՆԱԶ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

(ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒՅՑՈՒՆՆԵՐ)

Բաժնական գեղեցիկ տեսք ունի Իջևանից չորս վերստ հե-
ռու, լեռները արանքում տեղավորված Վերին-Աղզան գյուղը:
Ներքև, ձորում, փոքրիկ վտակն է հոսում քարերի ու
ժայռերի արանքից խշխշալով: Վերևը, բարձր լեռան լանջին,
անտառներն են պատկերվում կանաչագեղ:

Իսկ ձորն է վեր գյուղի տներն են նստոտել այս ու այն
կողմ, ժայռերին կամ բլուրներին թիկն տված, փոքրիկ այգի-
ներով շրջապատված: Այնտեղ կան յերկհարկանի տներ ել՝
ձորի վրա հսկող տախտակաշեն պատշգամբներով:

Մեղմ, հաճելի ոգ ունի Վերին Աղզանը և վտակի ափին,
քարի տակից հոսող չափազանց առողջարար ջուր ունեցող մի
աղբյուր: Այդ ջուրը հիանալի կերպով ախորժակ է բաց անում
և լավ է ոգնում մարսողությանը:

Ձորի մի կողմից մյուսը ձգված ճոճվող կամուրջն առաջ-
նորդում է դեպի աղբյուրը: Դյուղի յերիտասարդ հարսներն ու
աղջիկները շարունակ լիքն են ջրի մոտ: Ու այնտեղ դուք կը-
լսեք հաճախ այդ ժիր ու առողջ կանանց զրնգուն ձայներն ու
կատակները զվարթախոս:

Այս գյուղի բնակիչներն առհասարակ առույդ են ու պար-
թև հասակ ունեն: Այնտեղ դուք կհանդիպեք ձյունահեր ծե-
րունիների, հաղթանգամ ու ժիր, վրոնք բազմաթիվ տարիներ
ի հախուռն հարվածից յերբեք չեն ծռել իրենց մեջքը:

Դյուղացիք զլիսավորապես զբաղվում են անասնապահու-
թյամբ, հողագործությամբ և մասամբ ել մեղվաբուծությամբ:

Պատ. խմբագիր՝ Ռ. ԱՂԱԲԱԲ

Տեխ. խմբագիր } Գ. Բաբուրյան
Սրբազրիչ

Մի ամառ յես անցկացրի այդ գյուղում վորսէս հյուր իմ դասընկեր Անուշավան Մեհրաբյանի մօտ: Քաղաքում Անուշավանը մեր տանն էր իջել և միասին սովորում էյինք մանկավարժական տեխնիկումում: Արդեն վերջին կուրսի ուսանողներ էյինք համարվում:

Չափազանց մտերմացել էյինք յես ու Անուշավանը: Համարյա անբաժան ընկերներ էյինք: Յեւ յես շատ մեծ հաճույքով, անմոռանալի ու անջնջելի տպավորություններով անցկացրի ամառը նրանց գյուղում:


Նրանց տունը գտնվում էր ձորի ափին, մի քարաժայռի վրա: Շարունակ լսվում էր ջրի անուշ խշխշոցը: Կարծես դա մի անսպառ յերաժշտություն էր, ախորժալուր ու հաճելի, վոր գիշեր-ցերեկ լսվում է առանց դադարի: Տան յետևը ախոռն էր, մարագը և թաղա մի փոքրիկ այգի, չորս կողմից ցանկապատված: Այնտեղ, այգում, խնձորի ծառերի արանքում տասներկու հատ փեթակ կար, վորոնք կարմիր տուփերի պես նրստել էյին կանաչների վրա: Ու նրանց շուրջը լսվում էր շարունակ ջանասեր մեղունների միապաղաղ աղմուկը:

Այդ փեթակներով էր զբաղվում Անուշավանի հայրը, Սարգիս Մեհրաբյանը. մօտ հիսունհինգ տարեկան հաղթանդամ մի մարդ, վերին աստիճանի ուրախ, կատակախոս: Նրա աչքերից անպակաս էր ժախտը և իր աշխուժությամբ ու զվարթությամբ վարակում էր շրջապատը:

Զբաղվում էր գլխավորապես փեթակներով, կով ուներ և մի քանի վոչխար, վորոնք յեղբոր վոչխարների հետ արածում էյին սարում: Յերկար ժամանակ քաղաքում ապրած լինելով՝ բավական զարգացած, աշխարհի լավն ու վատից հասկացող մարդ էր:

Յերեկոները Սարգիս ապերը հետաքրքիր պատմություններ էր պատմում ու իր զվարթ կատակներով զբաղեցնում մեզ: Իսկ ցերեկները գնում էյինք Անուշավանի հետ լողանալու կամ բարձրանում-նստում անտառի փեշերին:

Վորքան հաճելի և ոգտակար էր լողանալ լեռնային վտակի այդ զով ու վճիտ ջրերում... Պառկում էյինք արևի կենա-



ըստ ճառագայթների տակ, տաքուկ ավազի վրա, հայացքը
յերկնքի կապույտ լանջին, լեռան կանաչափառ կատարին կամ
դիտում գանազան ուղղությամբ շարժվող բամբակի քուլաների
նման սպիտակ ամպերի ընթացքը: Նետվում էյինք սառնորակ
ալյակների գիրկը, կրծքով մաքառում նրանց դեմ, թևերով
պատառոտում նրանց թափանցիկ մարմինը, բազմաթիվ կնճիռ-
ներ գոյացնելով արծաթացու:

Բայց ինձ ավելի մեծ ուրախություն պատճառեց, յերբ մի
որ Անուշավանի հայրն առաջարկեց իրեն հետ բարձրանալ սար:
Մի քիչ գործ ունեւր այնտեղ և ուզում եր մեզ հաճույք պատ-
ճառել այդ ճամբորդությամբ:

Այդ գիշերը խիստ անհանգիստ քնեցի և անհամբեր սպա-
սում եյի լուսանալուն:

Լույսը նոր եր բացվել, յերբ Սարգիս ապերը մեզ ձայն
տվեց: Եես կիսարթուն եյի, խկուլն վեր թռա անկողնից և
սկսեցի շտապով հագնվել: Ավելի դժվարությամբ վեր յելավ Ա-
նուշավանը. դժգոհ եր կարծես, վոր վաղ առաւոտյա քաղցր
քնից նրան զարթեցրին: Դե, նրա համար այնքան ել նորու-
թյուն չեւր սար գնալը: Ով գիտե, քանի անգամ եր յեղել այն-
տեղ: Մինչդեռ յես առաջին անգամն եյի գնում ու դրա հա-
մար ել հետաքրքրությունս գնալով ավելի յեր վառվում:

Մենք վերցրինք մեզ հետ ուտելու մի որվա պաշար, վոր-
սորդական հրացաններ և մեր վերարկուները: Յուրաքանչյուրը
մեզանից մի-մի կապոց կազմելով վաթաթեցինք մեր ուսը և
ճանապարհ ընկանք:

Գյուղի կողպերատիվի առաջ ձեռնափայտին հենված կանգ-
նել եր բարձրահասակ, ճեփ-ճերմակ մորուքով և սպիտակ ու
թավ հոնքերի տակից հաղիվ մարմրող բարեփախտ աչքերով ծե-
րուկ Զաթո ապերը:

— Ետ ուր եք ետպես բարով-խերով գնում, Սարգիս,—
հարցրեց ծերունին ուղղելով իր մեջքը:

— Ուզում եմ սար գնալ, Զաթո ապեր. ես ջահերներին
եւ տանում եմ հետս, վոր մի քիչ զինջանան,—պատասխանեց
Սարգիս ապերն առանձին հարգանքով բարևելով ծերունին:

— Բարով գնաք, բարով յետ դառնաք, ախպեր,—կանչեց
մեր յետևից ծերունին գուրգուրանքով:

Մենք իջանք քարքրոտ զառիվայրը և ձոճվող կամուրջի
վրայից անցանք ձորի հակառակ ափը և ապա սկսեցինք կա-
մաց-կամաց բարձրանալ:

— Ետ ծերուկը հարյուր տարեկանից անց ե, բայց դեռ
չի կորցրել իր կայտառությունը: Յերկու տղա ունեւր, վորոնք
սպանվեցին պատերազմի դաշտում: Իր արդեն խիստ պառաված
կնոջ հետ միասին կարողանում են աշխատել ու պահպանել ի-
րենց տնտեսությունը,—պատմում եր ինձ Սարգիս ապերը ճա-
նապարհին կողքիս քայլելով ինչպես մի կայտառ պատանի:

Հիանալի առաւոտ եր և մենք հաճույքով էյինք շնչում
զով, մաքուր ոդը: Արևը նոր եր ծագել և նրա ճառագայթնե-
րը կարծես վոսիկ փոշի էյին ցանել լեռների կատարներին,
մուգ-կանաչ մշուշ դարձած անտառների վրա և կամաց-կամաց
իջնում էյին դեպի ձորը:

— Ես ինչո՞ւ ճանապարհը ծռեցինք, հայրիկ ջան, ուղիղ
ճանապարհով չենք բարձրանում,—հարցրեց Անուշավանը յերկ-
մըտանքի մեջ ընկած այս ու այն կողմ նայելով:

— Ծիշտ ե, ես ճանապարհն ավելի հեռացնում ե, բայց
հետաքրքիր ե. ամբողջ ժամանակ անտառների միջով պիտի
գնանք,—պատասխանեց Սարգիս ապերը զվարթ ձայնով:

Գյուղը մնաց մեր յետև: Այլևս չեւր յերևում: Մի մեծ բը-
լուր նրան ծածկեց իր հաղթահասակ զանգվածով: Ձորն աս-
տիճանաբար իջնում եր և խնձորի բազմաճյուղ ծառերը պա-
հում էյին նրան իրենց կանաչ ծածկոցով:

Մինչև լեռան կուրծքն իջնող անտառի փեշերը սայլի ճա-
նապարհներն էյին զիգզագ անցնում, դեղնած արտերի արան-
քով:

— Տեսնո՞ւմ ես ինչ մեծ դժվարություններով ե վարում
ու հնձում մեր գյուղացին սարերի կրծքին ընկած հանգերը:
Ինչ մեծ տանջանքներով են իջնում ու բարձրանում սայլերն
այնտեղ,—ասում եր Սարգիս ապերը, ցույց տալով սարն ի վեր
ձգվող կեռ ու մեռ ճանապարհները:

Մենք բարձրացանք փոքրիկ բլուրներ և նրանց վրա ձգված արտերի նեղ կածանով մեր քայլերն ուղղեցինք դեպի մոտակա անտառը:

Արևի վոսկեփրփուր շողերն առատորեն թափվել էին մեզ վրա և ախորժելի շոյանքով փայփայում մեզ, իսկ անտառից բղխող ոգի զով շունչը թարմություն ու կայտառություն եր հաղորդում:

Անտառն իջավ մինչև ձորը, իսկ դիմացը բացվեց մի գեղեցիկ տեսարան: Ամբողջովին սոսիներից բաղկացած մի փոքրիկ անտառ դիմավորեց մեզ, կանաչ մարգերով ծածկված: Բարձրահասակ ծառերը կանգնել էին մեկը մյուսին մոտիկ ու նրանցից բուրում եր խնկավետ անուշ բույրը:

Սոսիներից մեկի մոտ, խոտերի արանքում մենք նկատեցինք մի խոր անցք:

— Աղվեսի բուն է, աղվեսի բուն, — բացականչեց ուրախ Անուշավանը և սկսեց ձեռքի փայտով տրորել անցքը, փորփորել:

— Հը՛մ, կարծում ես, վոր աղվեսն այնքան միամիտ կենդանի չե, վոր դուրս յեղնի բնից: Ո՛ր, նա յերբեք չի շարժվի տեղիցը և սատանան անգամ չի գտնի նրան, — ասաց Սարգիս ապերը ժպտալով:

— Բա ինչպես անել, վոր մի վորևե հնարքով կարելի լինի դուրս բերել նրան, — հարցրի յես հետաքրքրությամբ լցված:

— Միմիայն ծուխ տալով: Ծխից ու միսից կարող ե նեղն ընկնել և ստիպված դուրս վազել...

Սարգիս ապոր այս յեզրակացությունը զրդեց Անուշավանին չոր փայտ ու ծղոտ հավաքել ու լցնել անցքի շուրջը:

Ի՛նչ հետո մենք լուցկին վառեցինք և փայտերն ու ծղոտներն սկսեցին այրվել: Մուխը պատեց չորս կողմ:

Մենք վարսորդական հրացանները պատրաստեցինք, վորպեսզի պետք յեղած դեպքում իսկույն կրակենք:

— Նա այնպիսի ոյինբազն է, վոր հենց մեր աչքի առաջ կծկվի ու բերանդ կմնա բաց, — ասում եր Սարգիս ապերը ծիծաղելով:



Յեւ, իսկապես, հենց մեր քթի տակ, խոտերի միջից, մի ակնթարթում, յերկար պոչ ունեցող մոխրագույն կենդանին դուրս թռավ, ծվաց ու թագնվեց խոտերի ու ծառերի արանքում:

Մենք մնացինք տեղն ու տեղը բարացած, շփոթված:

— Տեսար, վոնց պրծավ մեր ողակից: Աղվեսին բռնելու համար պետք է նրա չափ խորամանկ լինել, — կանչեց Սարգիս ապերը բարձրաձայն ծիծաղելով:

— Ինչպես կրակի ու ծխի ողակի միջից կարողացավ դուրս պրծնել, — հարցրի յես զարմացած:

— Դա անպայման ուրիշ անցք էլ ունեւ, վորից դուրս պրծավ ու փախավ:

Յես ու Անուշավանը ուշադրությամբ դիտեցինք և հանգիստ կած ծառի մոտ խոտերի մեջ գտանք մի յերկրորդ անցք: Գավազանով քանդեցինք և տեսանք, վոր այդ անցքը գնում է ու հողի տակ միանում մյուս անցքին:

— Տեսնում ե՞ք ինչ զգուշն է, այ թե ինչպես է ապահովում իրեն այդ խորամանկ գազանը: Աղվեսին բռնելու համար պետք է աղվես լինել:

Ծառերի անուշ բուրմունքի մեջ շարունակեցինք մեր ճամբան:

Շուտով սոսիների շարքը վերջացավ և մեր առջև բացվեց մի կանաչ բացատ չորս կողմից անտառներով շրջապատված: Խոտերի վրա քառասունի չափ փեթակներ կային: Մեղվաբուծական մի ամբողջ անտեսություն: Իսկ անտառի փեշին մի փոքրիկ սպիտակ առն՝ յերկու ապակեպատ լուսամուտներով: Բավականին հասակավոր միջահասակ մի մարդ սպիտակ շինության առաջ գալար ճյուղերից զամբյուղ էր պատրաստում:

Մենք շեղեցինք ճանապարհը և անտառի միջով իջանք ձորը:

— Դա իջևանի «Մեղու» անունով մեղվաբուծական արտելի մի ճյուղն է: Այստեղ լավ մեղր է ստացվում, ծաղիկներ շատ կան, — ասում էր Սարգիս ապերը ճանապարհին:

Արեն արդեն մոտենում էր գենիթին և տերևների միջից յերևում էր նրա վոսկեձույլ դեմքը, յերբ մենք մտանք ձորը: Այնտեղ մի հաղթանդամ և թեատարած ընկուզենու արմատի արանքից ահագին ջուր էր դուրս թափվում:

Դա կոչվում էր Կաթնաղբյուր:

— Լավ ջուր է խմելու համար, նստենք, հանգստանանք փոքրիկ իջտին, ճաշենք և ապա կամաց-կամաց անտառի միջով բարձրանանք սարը:

Սարգիս ապր առաջարկությունը տեղին էր: Մենք բավական բեզարել էյինք արդեն և ուտելու մեծ ախորժակ էր բացվել: Ուտելու գցած պայուսակները ներքև բերինք ու նստեցինք փոքրիկ մոտ, թավ կանաչի վրա, բազմաճյուղ ծառի հովանու տակ:

Յես և Անուշավանը խոտերի վրա փոքրիկ շորը և զարմեցինք նրա վրա հաց, պանիր, խորոված գառան միս և թթու դրած դանձիլը:

Հանձիր մի վայրենի բույս է, վոր աճում է լեռների վրա և առատորեն գործածվում է այդ շրջանի գյուղերում վորպես բանջարեղեն: Բավականին համեղ է լինում թթու դրած այդ բույսը և յես մեծ ախորժակով էյի ուտում հացի հետ:

Մինչ մենք ճաշատեղանն էյինք պատրաստում բնության այդ գեղատեսիլ գրկում, Սարգիս ապերը հրացանը վերցրած հեռացել էր մեզանից և ման էր գալիս անտառի խորքերում:


Հանկարծ լսվեց հրացանի պայթյուն և ծառերի արանքից թավալվոր ձորն ի վար գլորվեց մի փոքրիկ սպիտակ կենդանի: Անուշավանն իսկույն վազեց ու բերեց նրան: Նապաստակ էր: Դեռ կենդանի յեր և թաղրում էր Անուշավանի ձեռներին: Գնատակը ծակել էր նրա աջ ազդրը և բարակ շերտով արյունը ծորում էր սպիտակ մազերի վրա:

— Պետք է մորթել իսկույն ու խորովել, — առաջարկեց Սարգիս ապերը և Անուշավանի ձեռքից վերցնելով աչքերը կիսախուլի ու ամբողջ մարմնով դողդողացող կենդանին, գտնվում խրած դանակով կտրեց նրա վիզը և վերջ դրեց նրա ցավերին:

Մենք կրակ պատրաստեցինք, իսկ Սարգիս ապերը քերթեց նապաստակի մորթը, աղիքները մաքրեց և դրեց կրակի վրա յերկու քարի արանքում:

Շատ չանցած՝ խորովվող մսի անուշ հոտը տաքածվեց մեր շուրջը և ավելի գոգուեց մեր ախորժակը:

Սկսեցինք ճաշել: Վորքան ախորժակով էյինք ուտում:



Անտառի այդ հրաշալի ողջ և մեր կատարած հիանալի ճամբորդությունը գայլի ախորժակ էյին տվել մեզ: Ուտում էյինք ու խմում ծառի արմատից գլգլացող սառնորակ ջուրը, վոր արագընթաց հոսանքով գահավիժում էր ձորն ի վար և միախառնվում այնտեղ հոսող առվակին:

Սարգիս ապերը վերցրեց թեփ կրակի վրայից նապաստակի ճրթճրթացող միսը, կտրտեց ձեռքով և առաջարկեց մեզ ուտել: Թեև առաջին անգամն էյի ուտում նապաստակի միսը, բայց կարողացա մի կտոր ճաշակել:

Ամենից շուտ յես կշտացա, հետո Անուշավանը. մինչդեռ Սարգիս ապերը դեռ յերկար-յերկար շարունակում էր ուտել:

— Ծառի ախորժակ ունեք, այ բալամ,—ասում էր նա ծիծաղելով և մսի ու հացի կտորներն աղահորեն ծամելով:

Յես ու Անուշավանը պառկել էյինք խոտերի վրա, հանգրստանում էյինք: Բարձրահասակ էր Անուշավանը: Արդեն քսան զարնան շեմքին էր հասել: Առողջ դեմք ունեք, կենսուրախ, հոր նման զվարթախոս: Յես էլ համարյա տարեկից էյի նրան և մտերմական չափազանց սերտ կապերով կապված էյինք իրար հետ: Մեզ միացնում էյին մի քանի հանգամանքները՝ միասին ապրելը, սովորելը, դպրոցի հասարակական աշխատանքների մեջ մեր ակտիվ մասնակցությունը և մանավանդ՝ բնավորության մի քանի նմանորինակ գծերը:

Պետք է ասել, վոր նա հասարակական-կազմակերպչական մեծ ջիղ ունեք և նրան շատ էյին սիրում ու հաշվի առնում ուսումնարանում: Մինչդեռ յես ավելի ուժ տվել էյի ընթերցանությանը, մանավանդ գեղարվեստական գրքերի ընթերցանությանը, վորոնցով չափազանց տարվում ու հափշտակվում էյի և շատ ժամանակ սպառում:

Բավական հանգստացանք այդպես պառկած խոտերի վրա, յերբ Սարգիս ապերն առաջարկեց հավաքել իրերը և ճամբա ընկնել:

Արևն ինչպես մի հրեղեն կաթսա նստել էր գետի թին և նրա վոսկեպայծառ շողերը հազիվ էյին թափանցում ծառերի խիտ ճյուղերից ու տերևներից:

Մի նեղ ճանապարհ վորովում էր անտառի միջով, ձրգվում դեպի դառիվեր:

Մենք սկսեցինք համրաքայլ բարձրանալ:

Ձանազան ձևի ու տեսակի ծառեր ու թուփեր կային մեր շուրջը: Այլևս վայելչակազմ սոսիներ չկային: Նրանց փոխարեն կաղիների, վայրի խնձորի ու տանձի, թխկի ու հացի ծառեր էյին բարձրահասակ կամ կորաքամակ:

Մեր աջ կողմը յերևաց մի փոքրիկ քարաժայռ բորբոսնած ու կծղած խոտերով, ինչպես նաև մացառներով պատած: Իսկ քարաժայռի գլխին քարաշեն, կիսակործան տուն, վոր ավելի շուտ ամրոցի տպավորություն էր թողնում:

Ով գիտե, քանի դար առաջ, վոր բեզի կամ իշխանի ամբողջն ե յեղել դա, վորի մեջ տերը թագնվել ե իր թշնամիներից և առատորեն վայելել գյուղացիներից թալանած հարստությունը:

Յերբ բարձրացանք քարաժայռի գագաթը, մեր առաջ բացվեց մի շքեղ տեսարան: Ծառերն ավելի փարթամ էյին այնտեղ, ավելի խիտ: Խոտը մինչև մեր սրունքն եր հասնում: Իսկ խոտերի արանքում զանազան տեսակի բույսեր ու ծաղիկներ կային՝ թրջնուկ, պպուկ, փշատերև թփուտներ և թփերի վրա կարմրող անուշահամ մոռը...

Ո՛ր, անտառի այդ քաղցրահյութ և անմահական պտուղը մեզ շատ ուրախացրեց ու վեզեց: Յեվ մենք սկսեցինք յեռանդով քաղել ու ճաշակել:

— Տղերք, զգուշ կացեք, հա՛. մեկ ել տեսար խոտերի կամ թփերի արանքից վեր թռավ ու մարդու պես կանգնեց արջը, — զգուշացրեց մեզ Սարգիս ապերը, — մոռն ու մորին, անտառի ես ամենահամեղ պտուղները, արջի ամենասիրելի ուտելիքն են, վորոնց համար գժվում ե այդ սոսկալի գազանը: Գալիս ե, ժամերով թափառում խոտերի ու թփերի արանքում և հավաքում, ուտում ե այդ պտուղը: Վա՛յ նրան, ով եղպիսի ժամանակ կպատահի արջին. կբռնի, ջարդ ու փրշուր կանի իր ուժեղ թաթերով, սաղ չի թողնի...

Սարգիս ապոր այս նախազգուշացումը մեզ շատ վախեցրեց և մոռ քաղելիս շարունակ մեր շուրջն էյինք նայում ու շաղրությամբ:

Ստվերախիտ անտառ: Ծառերն իրար շատ մոտիկ, տերևներն ու ճյուղերը խառնված, թևանցուկ, վորոնց արանքից հազիվ եր նշմարվում յերկնքի կապույտ սավանը:

Մարդը զարգանգում եր այդ խոճ, ամայի վայրերում:

Յերբ մենք բավական ճաշակեցինք այդ հրաշալի պտուղից և շարունակեցինք կրկին մեր ճանապարհը, Սարգիս ապերն առաջ տարավ իր խոսքը:

— Մեզանից շատ առաջ ես անտառներում բավական առատ էյին գազանները, մանավանդ արջը: Վերջինս մեր ան-

տառների տերն եր, իշխանավորը: Նա համարձակ ման եր գալիս և կերակրվում անտառի պտուղներով՝ մորի, մոռ, մոշ, յեղակ, վայրի տանձ, խնձոր, կաղին: Արջերը կարողանում են իրենց ձեռների ու մագիլների շնորհիվ բարձրանալ ծառերը, նստել նրանց ճյուղերի մեջ, ներքև ցատկել կամ քայլել յետևի վտանների վրա մարդկանց պես: Մեր կողմերի հին վորսկաններից մեկը պատմում եր, թե ինչպես ինքը մի անգամ այս անտառում վորս անելու ժամանակ, խոտերի ու մացառների արանքում լսում ե ինչ-վոր խշշոց, մեկը չոր ճյուղեր ջարդոտելով առաջ եր գալիս: Բայց ծառերի ու մացառների շարքն այնքան խիտ եր, վոր վոշինչ չեր յերևում... Լեղիս պատվեց վախից, — պատմում եր վորսորդը, — խսկույն զգացի, վոր այդպես խշրտալով, շփշփալով յեկողը արջ կլինի: Դորն ընկավ ջանս: Հրացանս պատրաստ պահեցի, բայց սիրտ չարի կրակել, կարող եր գնտակը վրիպել կամ, յեթե կաչեր, կարող եր վիրավորել միայն, իսկ վիրավորված արջը սոսկալի բան ե, նրա ձեռքից մարդս գժվար թե կարողանա վողջ պրծնել, այնքան կատաղում ու գաղազում ե: Ինչ անել հապա... Ահ ու սարսափ սրտումս, կամացուկ ինձ գցեցի մի հաստ, լայն գիրկ ծառի յետև, հրացանը պատրաստ ձեռքիս: Ծառն իր լայն բունով բոլորովին ծածկել եր ինձ:

«Անտառի գազանը շփշփալով, ճյուղերը ջարդոտելով հանդարտորեն առաջ յեկավ: Յերբեմն կանգ եր առնում ու փրնշալով ինչ-վոր բան հոտոտում: Առաջ յեկավ և մի վայրկյան կանգ առավ իմ թագատարանից մի քանի քայլ հեռու... Սիրտս ցամաքեց, ել չեր բաբախում. ըն՛ը, մտածեցի յես, ես ե, կտեսնի ինձ ու հարձակվելով իր սոսկալի թաթերի մեջ կըսեղմի, կջարդոտի վոսկորներս... Իմ բախտից չնկատեց ինձ և դարձյալ շփշփալով ու փնչալով շարունակեց իր ճանապարհը: Ծառի յետևից զգուշությամբ նայեցի ու ինչ տեսնեմ. մի փոքր կովի չափ, սևամորթ գազան եր, վոր քիչ հետո դարձյալ ծածկվեց ծառերի ու խոտերի արանքում»:

«Յերկար ժամանակ սիրտ չեյի անում դուրս գալ ծառի յետևից. վախենում էյի, վոր արջը նկատի ինձ ու կրկին յետ



դառնա (թեև արջերն այնքան ել սուր աչք չունեն, ինչպես գայլը): Յեթե ընկեր լիներ ինձ հետ, գուցե սիրտ անեյի կրակել նրա վրա: Բայց մենակ, այդ խուլ վայրում, յես սիրտ չարի...

«Մարտափելի գազան ե արջը, — շարունակեց Սարգիս ապերը. — յեթե մարդուն սաղ-սաղ բռնեց, չի սպանի իսկույն, թաթերի մեջն ե առնում, ծոմոռում, ճմոթում ե նրա մարմինը, իր բուրբ աչքերը փայլեցնելով, կարծես մեծ բավականություն ե զգում այդպես վարվելով: Այդպես կիսամեռ ու կիսակենդան դարձրած մարդուն տանում, գցում ե մի փոսի մեջ, վրեն լցնում խոտ, ճյուղ, տեղահան արված փոքրիկ ծառ, այն ամենն՝ ինչ ձեռքն ե ընկնում: Այդպես ծածկելով, թողնում, գնում ե ուրիշ տեղ, մինչև վոր կիսակենդան կենդանին կամ մարդը մեռնում ե, հետո կամաց-կամաց նեխում ու հոտում: Այդ վիճակում մարդու կամ կենդանու լեշը դառնում ե արջի համար մի համեղ կերակուր:

«Պատահել ե սակայն, թեև շատ սակավ, վոր արջի ճանկըն ընկած մարդը պահելով շունչն՝ իրեն ձևացրել ե մեռած. արջն ել կարծելով, վոր իսկապես մեռել ե, տարել, գցել ե մի փոսի մեջ և ինքը թողել, գնացել ե: Նրա հեռանալուց հետո, մարդը վեր ե կացել և կամացուկ ծլկվել անտառից... Վորքան կատաղում, գազազում ե արջը, յերբ վերադառնալիս տեսնում ե իր վորսը չբացած: Ո՛ր, մռնչալով ու փնչալով նա դես ու դեն ե վազվզում, ջղախուժյունից ճյուղեր ե ջարդոտում»:

Այսպես շատ հետաքրքիր դեպքեր պատմեց Սարգիս ապերը և նրա պատմածի ազդեցության տակ, ինչ խոսք, վոր մի անորոշ վախ ընկել եր մեր սրտերը:

Ու թվում եր մեզ, թե ահա վորտեղից վոր ե խոտերի միջից կամ ծառերի արանքից հանկարծ դուրս կալածնի վայրենի գազանը: Յերբ այդ միտքը յես հայտնեցի Սարգիս ապորը, նա մեղմիվ ժպտաց և ասաց.

— Այժմ մեր անտառներուս շատ քիչ ե մնացել այդ գազանից: Հազվադյուռ դեպքում, այն ել անտառի շատ խուլ խորքերում միայն կարելի լի հանդիպել նրան:



Սարգիս ապոր այս հանգստացուցիչ խոսքերը սակայն բուրբուխ չկարողացան հասնել իրենց նպատակին։ Մենք միևնույն կասկածով դիտում եյինք շարունակ մեր շուրջը և ամեն մի փոքրիկ շարժումն անտառում՝ գրավում էր մեր ուշադրութիւնը։

Գնալով ճանապարհն անտառում դարձավ ավելի գառիվեր ու դժվար։ Տերևներն ու խոտերը շրջափակում եյին մեր տեսողութեան հորիզոնը։ Մենք ավելի դանդաղեցրինք մեր քայլերը։ Մեզանից առաջ էր քայլում Սարգիս ապերը, հնայած իր տարիքին՝ ավելի աշխուժ էր և ավելի ժիր, քան մենք։

«Ու՛ր ե տանում մեզ այդ մարդը», մտածում եյի յես անհանգիստ և գնում եյի բախտս հանձնած նրա ձեռքը։

— Ես ուր եմ գնում, հայրիկ ջան, արևն արդեն իջնում է, խոս միտք չունենք գիշերելու անտառում, — հարցրեց Անուշավանը։

— Հը՛, վախենում ես գիշերել անտառում։ Գիտե՞ս, վորքան լավ է գիշերն անտառում, խաղաղ ու հանգիստ, — պատասխանեց Սարգիս ապերը ժպտալով։

Նրա անգործութիւնն ու զվարթ ժպիտը բարձրացրին մեր տրամադրութիւնը։


— Դու իսկի գիշերել ես անտառում, — հարցրեց Անուշավանը հետաքրքրութեամբ։

— Մի քանի անգամ պատահել է։

— Բոլորովին մենակ, — բացականչեցի յես վոչ պակաս հետաքրքրութեամբ լցված։

— Ո՛ր, բոլորովին մենակ չափազանց դժվար է գիշերել անտառում։ Ինձ պատահել է գիշերը միայն սարը գնացող մեր գյուղացիների հետ, — սկսեց պատմել Սարգիս ապերն իրեն հատուկ քաղցր լեզվով, — առաջին անգամ դա պատահեց շատ տարիներ առաջ, յերբ յես հազիվ քսան տարեկան մի յերթաասարդ եյի և շատ եյի սիրում լեռները բարձրանալ, մտնել անտառի խորքերը, մոռ, մորի, մո՛շ հավաքել, լեռնային վտակներում լողանալ։ Մի ամառային գիշեր մեր մի քանի գյուղացիները, հորեղբայրս և յես ճամբա ընկանք դեպի սար։ Ուշ էր

արդեն, մտանք անտառի խորքերը, գիշերը վրա տվեց։ Վորոշեցինք գիշերն անտառում անցկացնել և առավոտ ծեգին շարունակել ճանապարհը։ Ընտրեցինք մի հարմար տեղ, մի հաստ կաղնու տակ, դարսեցինք մեր պայուսակներն ու վերարկուները։ Այնքան մութն էր, վոր մի քայլ հեռու վոչինչ չէր յերևում։ Մի կողմից տերևների շվաքը, մյուս կողմից անլուսին գիշերվա խավարը թանձր վարագույրով ծածկել եյին անտառը։ Մեր չորս կողմը լուռ էր, տերևները չեյին շարժվում։ Յերբեմն-յերբեմն ինչ-վոր բան էր չխկում. ծառից պոկվող և ներքև ընկնող չոր ծղոտի ձայնն էր դա։ Հեռվից, անտառի խորքում ինչ-վոր թռչուն էր մերթ ընդ մերթ ծղրտում և մի-շատների սուլչերն եյին լսվում շատ կամաց։



«Մարդը զարգանգով բռնվում էր, յերբ դիտում էր այդ տարրերնակ շրջապատը, յերբ զգում էր, վոր գտնվում է անտառի խորքում մութ գիշերին։ Յե՛վ յեթե ուղեկիցներս, մանավանդ հորեղբայրս չլինեյին, յես կարող եյի խելագարվել սարսափից։ Թվում էր, թե ահա վորտեղից վոր է քեզ վրա

կթռչի ծառերի կամ տերևների արանքում թաքնված մի վորեն գազան, կհարձակվի ու պատառ-պատառ կանի քեզ: Այն ժամանակ մանավանդ մեր պապերն ու տատերը չափազանց սնահավատ ու տգետ լինելով՝ մեզ վախեցնում էին զանազան դևերով, չարքերով, ջիներով, սարսափելի բաներ պատմում նրանց մասին: Ու մեզ թվում էր, թե անտառում գիշերով նրանք դուրս են գալիս և ազատ շրջում են, ծամածռություններ անում, մարդկանց փախցնում»:

«Ինչ արած, այդպես էլին սովորեցրել մեզ մեր նախնիքները...»

«Հիմիկվա մեր նոր սերունդն եղպես բաների մասին վոչ գաղափար ունի և վոչ էլ վախենում ե: Հիմի կյանքը վորքան է փոխվել: Յեթե են ժամանակը մենք ետրվա խելքն ունենայինք...»:

Ու մի պահ կանգ առավ, հառաչեց, հանգիստ շունչ քաշեց Սարգիս ապերը:

— Հա, ընկերներիս ասեմ, վորտեղ հասա, մաքիս թելը կտրվեց...

— Դու հասար ախտեղ, հայրիկ ջան, վոր գիշերը մնացիք անտառում և սաստիկ մութն էր, — բացական էր Անուշավանն ոգնության հասնելով:

— Հա, իմ անուշ բալեքիս ասեմ, սոսկալի մութն էր անտառում: Մեր գյուղացիք պառկեցին իրար կողքի ու քնեցին: Լսվում էր նրանց խաղաղ խռովոցը: Կարծես թե հեշ, իրենց տանն են գտնվում, այնքան հանգիստ էլին նրանք: Հորեղբայրս տեղավորեց ինձ իր կողքին և առաջարկեց քնել: Բայց յես քնել չկարողացա, մի անորոշ վախ հետևում էր ինձ, կրծքում սիրտս: Չափազանց զարմանում էի, վոր մերոնք այդպես անհոգ ու անդարդ քնել են: Աչքերս անթարթ հառել էի խավարին ու մնացել այդպես չոր խոտերի վրա պառկած, վերարկուն վրես գցած: Չգիտեմ վորքան ժամանակ անցավ, կես գիշերին մոտ էր, թե անց, մեկ էլ ինչ-վոր բան խշրտաց շուրջըս. վեր թռա ահ առած, ուղեցի բղավել: Բայց ուշադրությամբ ականջ դնելով համոզվեցի, վոր դա գեփյուն էր, վոր

կամացուկ շարժում էր խոտերն ու տերևները: Կրկին գլուխս դրի պայուսակիս վրա, ինչ-վոր բան կարծես ծանրացավ ինձ վրա, աչքերս փակվեցին, ամեն ինչ չբացավ, հարկեց շուրջս, դարձավ անորոշ բան... Չգիտեմ վորքան ժամանակ էր անցել, յերբ հանկարծ ականջիս մեջ թնդաց ինչ-վոր ձայն: Աչքերս բացի ու քնաթաթախ վեր թռա: Դա հորեղբայրս էր, վոր ուժեղ, առողջ ձայնով հազաց մի յերկու անգամ և դարձյալ սկսեց խռովալ:

«Ախպեր, մտմտացի յես զարմացած, ես մարդիկ վոնց չեն վախենում, վոր եսպես անհոգ ու անխուժ քնում են, հը... Ու այդպես մտածելով ու հորանջելով դարձյալ մի առ ժամանակ աչքերս մնացին բաց: Զեփյունն սկսեց ավելի ուժեղանալ և տերևների ու խոտերի շրջյուններն ավելի պարզ էլին լրսվում: Ու մեկ էլ շատ հեռվից, անտառի խորքերից ականջիս հասան խոլ, ընդհատվող վոռնոցներ: Յես իսկույն հասկացա, վոր դրանք գայլեր են: Քսան դարուն հաշված վոր գյուղացին, մանավանդ լեռնցի տղա, չի ջոկում գելի վոռնոցը... Սախայն դրանք այնքան խուլ էին ու ընդհատվող, վոր չեյի կարողանում վորոշել, թե այդ ձայները վոր կողմից են գալիս և վորքան հեռավորությունից:

«Ինչ մեղքս թագնեմ, յես չափազանց վախեցա և զարթեցրի հորեղբորս: Հորեղբայրս, պետք է ասել, թունդ քնել էր, նա շուռ յեկավ և քնի մեջ, թե արթուն հարցրեց դժգոհ ձայնով. «Այ գյաղա, ինչ ես ուղում, ինչի չես քնում». յես թե՝ «Հորեղբայր, գելերը յեկել են, շրջապատել մեզ, վոռնում են». նա թե՝ «Մի վախի, այ բալամ, գելերը սիրտ չեն անի մոտենալ մեզ, քնի, քնի...»:

«Ու կրկին սկսեց խռովալ... Վահ, ես ինչ բան ե. մարդ անտառում մութ գիշերին քնի, գելերը վոռնան և նա հանգիստ քնած մնա և ուշադրություն չդարձնի... Դա ինձ շատ տարբերակ ու անհասկանալի թվաց: Դուցե հորեղբայրս լավ չհասկացավ ինձ. յեթե նա հասկանար, անպայման վեր կկենար և մյուսներին էլ կզարթեցներ, մտածեցի յես և կրկին ձեն տվի: Այս անգամ զարթնեց գյուղացիներից մեկը, Սըշակ ապերը:

«Ի՞նչ կա, Սարգիս, ինչի՞ ես հորեղբորդ զարթեցնում, թող քնի, բալա ջան, բեզարած ես». յես թե՛ «Արշակ ապեր, գել կա, գիշերը վոռնում են». նա թե՛ «Թող վոռնան, անուշ ջան, մի վախի, գելերը մոտ չեն գա, սիրտ չեն անի...»:

«Վահ, կրկին մտմտացի զարմացած. մարդը գելից չվախենա՞, ես ել կես գիշերին, անտառի խորքում...»:

«Արշակ ապերս ել քնեց և յես արթուն մնացի դարձյալ»:

«Հետզհետե սաստկացող զեփյուռից տերևները սրսփում էյին մեղմ ձայներով ու կամաց-կամաց ցրտում եր ողը, խոնավում: Մի անդիմադրելի ծանրություն փակեց աչքերս, յես գզացի, թե ինչպես մի ախորժելի բան շոյեց ամբողջ մարմինս ու մի վայրկյան ազոտ կերպով լսեցի իմ խռմփալու ձայնը, հետո ամեն ինչ լուեց...»

«Առավոտ վաղ, յերբ դեռ նոր եր լույսը պատուել անտառի թանձր աղջամուղջը և ներս թափանցել, ինձ զարթեցրին: Յես վեր յելա ու ինչ տեսնեմ, մերոնք բոլորը զարթնել, ծառի մոտ կրակ վառել, տաքանում են: Վաղ սռավոտվա ցուրտը կծում եր և խարույկից բարձրացող տաքությունն այնքան ախորժելի յեր թվում:

«Շուտով մենք մեր իրերը վերցրինք ու շարունակեցինք մեր ճանապարհը...»:

— Բա, մյուս անգամ ի՞նչպես գիշերեցիր անտառում, հայրիկ ջան, — հարցրեց Անուշավանը հետաքրքրությամբ վառված:

Սակայն հայրն ել չհամաձայնվեց պատմել, վորովհետև անտառի ծառերն սկսեցին նոսրանալ և նրանց արանքից յերևում եր մի ընդարձակ բացատ:

— Մյուսի մասին կպատմեմ մի ուրիշ անգամ. իսկ հիմա հետաքրքիրն այն ե, վոր հրես հասնում ենք...

Այս հայտարարությունը մեզ գոտեպնդեց, սիրտ տվեց: Արևն արդեն մայր եր մանում և ծառերի վրա իջել եր վոսկեղեն փոշի: Շուտով նա հավաքեց իր վերջին շողերը և մշուշն սկսեց ամեն կողմից սողոսկել անտառի մեջ:

*
*
*

Մենք դուրս յեկանք մի կանաչ հարթավայր, դիմացը լեռան գագաթն եր բարձրանում ինչպես մի հսկայական խորդ ու բորդ զանգված:

— Դա մեր սարն ե, — ասաց Սարգիս ապերն աշխույժ, — նրա վրա չավ արոտատեղեր կան:

Հարթավայրի վրա մեկը մյուսից մեծ կամ փոքր վրաններ և հողաշեն ողաներ կային: Նրանց արանքից յերկու գամփո դուրս թռան և ուժեղ հաջոցով հարձակվեցին մեզ վրա: Նրանք գուցե պատահուտեյին մեզ, յեթե մոտակա վրանից դուրս յեխող հովիվը չսաստեր նրանց: Շենքն այլևս չհաջեցին, հանգարտ մոտեցան. թեև կատաղության բոցը մարեց նրանց աչքերում, բայց դեռ կասկածում էյին, պոչը շարժելով նրանք մին մեզ էյին նայում, մին իրենց տիրոջը՝ հովվին, սպասելով գուցե նրա հրամանին, վորպեսզի վերսկսեն իրենց հարձակումը: Յեվ այդպես արթուն հսկելով մեզ առաջնորդեցին մինչև մոտակա վրան: Յեվ, յերբ վերջապես համոզվեցին, վոր մենք վտանգավոր մարդիկ չենք, քաշվեցին մի կողմ:

Հովիվը ճանաչում եր Սարգիս ապորը և մեծ հարգանքով վողջունելով նրան՝ մեզ հրավիրեց իր վրան: Սարգիս ապերը չնորհակալություն հայտնեց և մենք առաջ անցանք:

Անուշավանի հորեղբոր ողան բավականին ընդարձակ եր: Յերբ դուռը բացինք, ներսի տաք գուլը խփեց մեր սառած դեմքերին:

— Բարի աջողում, Ալմաստ հարս, ապերս տանը չի, — կանչեց Սարգիս ապերը:

Ողայում միայն յեղբոր կինն եր, վոր զլխաշորն ուղղեց և կամացուկ պատասխանեց.

— Այ բարով եկեք, ապերն ես ե կգա:

Յեվ հրավիրեց մեզ նստել: Մենք իրար կողքին տեղավորվեցինք թախթին, վորի վրա մի հին կարպետ կար փռած:

Ալմաստ հարսը հաց եր թխում, ձեռներն ալրոտ ու խմո-

ըստ եյին: Ոգայի մի անկյունում կրակարանին ամրացրած թիթեղի վրա հացերը յեփում եյին և նրանցից բարձրանում եր մի ախորժելի գոլորշի, թխվող հացի հաճելի բուրմունքը:

Դուռը բացվեց և իր հաղթ հասակով, գառան մորթուց կարած փափախը գլխին ներս մտավ Ռհան ապերը: Շատ զարմացավ, նույն իսկ աչքերին չհավատաց, այնքան անսպասելի եր նրա համար մեր գալուստը: Մոտ յեկավ և ուրախ-ուրախ բացականչեց.

— Բարով ես յեկել, ախպերս, ետ վոնց միտք արիւր գալ մեր դուրերը (կողմերը):

— Մի յերկու-յերեք օրով քեզ մոտ զոնաղ (հյուր) ենք յեկել, ապեր. խոմ նեղություն չենք պատճառի քեզ,—պատասխանեց Սարգիս ապերը ժպտալով:

— Ո՛, բարով եք յեկել, բարով, հազար բարով, աչքիս, գլխիս վրա տեղ ունեք. յերկու օր չե, յերկու շաբաթ մնացեք, շատ ուրախ կլինեմ, — ասաց Ռհան ապերը և մի համառ հայացք գցեց ինձ վրա:

— Ես իմ հյուրն եմ, ապերս, Անուշավանի ընկերը, քաղաքում միասին են սովորում:

Ռհան ապերը ժպտաց ու մտերմաբար գլուխ տվեց ինձ: Այա մահակը տեղավորելով անկյունում, մոտ յեկավ:

— Հը, այ կնիկ, լավ են դուրս գալիս հացերը, — կանչեց նա կնոջը:

— Լավ, ես անգամվա այդուրը լավն եմ, — պատասխանեց Այմաստը, յեռանդով շարունակելով իր գործը:

Ռհան ապերը տեղավորվեց թախթի վրա, վորն իր ընդարձակությամբ ողայի կեսից ավելին եր բռնում:

— Դե, հիմի պատմեք տեսնեմ, ինչ նոր խաբար կա գլուղում, — հետաքրքրվեց Ռհան ապերը և գրպանից հանելով չիբուխը՝ ծխախոտ լցրեց ու սկսեց ծխել:

— Հեչ թաղա բան չկա, ախպերս, բոլորը լավ են՝ իրենց գործին, ձեր քեֆն են հարցնում, — պատասխանեց Սարգիս

ապերը և իր հերթին հետաքրքրվեց սարում ապրողների կյանքով:

— Ախպորս ինչ պատմեմ, վոր լավ լինի: Ամեն առավոտ ծեգին, ինչպես գիտես, վոչխարն ու տավարն ուղարկում ենք արածելու: Նորությունն են եմ, վոր կոլխոզն օր-օրի ավելացնում ե իր անասունների թիվը: Յեթե առաջ յերեք հարյուր վոչխար ունեք, հիսունի չափ կով, հիմա դրանց թիվը կրկնապատկվել ե և գնալով ավելանում ե: Այնպես վոր շուտով մենք բոլորս կոլխոզ պիտի մտնենք: Միակ ճանապարհն ետ ե: Ենտեղ մանուկները մեզանից լավ են ապրում, — ասաց Ռհան ապերը և փափախը բարձրացնելով քորեց գլուխը:

Այմաստ հարսը թխած հացերը դարսեց կրակարանի կողքին դրված սեղանի վրա:

— Այ կնիկ, ետ սեղանը դես բեր. տղերքը քաղցած կլինեն, ուտելու ժամանակն ե:

Յեվ առանց սպասելու, վոր կինն իր կարգադրությունը կատարի, ինքն առաջ ընկավ, սեղանի վրայի հացերը դարսեց ուրիշ տեղ և սեղանը բերեց ու դրեց մեր առջև:

— Ներողութին կանեք, ախպեր, ձեր ազիզ արևին մատաղ, վոր խոսեցնել տվի ու գլխի չընկա, վոր ճանապարհ եք կտրել, սոված կլինեք, — ասաց Ռհան ապերը խիստ զգացված, խոսքը գլխավորապես ուղղելով ինձ:

— Վոչինչ, Ռհան ապեր, դրա մասին այնքան մի մտահոգվի, թող ձեր ջանը սաղ լինի, — պատասխանեցի յես աշխուժով:

Ռհան ապերն իր ծերունազարդ աչքերով բարի ու բերկրալից հայացք գցեց ինձ վրա: Պարզ եր, վոր իմ պատասխանը շատ դյուր յեկավ նրան:

— Դեհ, տեղավորվեցեք, այ բալամ, ճիշտ ե, տեղը նեղվածք ե, բայց մեր սիրտը շատ լեն ե, լեն...

Մի կերպ տեղավորվեցինք փոքրիկ սեղանի շուրջը: Մեր պայուսակների միջից հանեցինք ուտելիքի մնացորդները: Սարգիս ապերը մի փոքրիկ շիշ օղի յեր բերել, լցրեց բաժակի մեջ ու տվեց մեծ յեղբորը:

— Վերցրու, ապերս, և անուշ արա...

— Ա՛յ, յես քո ազիզ արևին մատաղ, համ. ջանս լնվմըրսել եր, կտաքանա հիմա, — ուրախ-ուրախ բացականչեց Ոհան ապերը, ողին կուլ տվեց և դառնալով կնոջն ասաց.

— Դե, Ալմաստ, ինչ ունես-չունես մեյդան բեր, տղերանց պատվիր:

Սեղանի վրա դարսվեցին նոր թխած հացերը, սառն ու լերթ մածունը, մեզ հետ վերցրած ուտելիքներ: Մանավանդ նոր թխած հացերը չափազանց համով եյին: Կտրտում եյինք, թաթախում մածնի մեջ և անուշ անում:

— Լազնթ, համեղն ե շատ...

Ոհան ապերը բոլորից շատ և չափազանց ախորժակով եր ուտում:

Նրանց մեջ ամենից քիչ յես եյի ուտում:

— Բաղաքացի յես, քաղաքացու փոր ունես, ուտել-փրթել չգիտես, — ծիծաղելով ասում եր Ոհան ապերը:

— Հանգուցյալ հայրս ճաշին յոթից-ութ հաց միանգամից եր ուտում: Ենպիսի մեծ մարմին ուներ, փոր դռնից հազիվ եր ներս մտնում: Հե՛յ գիղի բան աջողած հայրս: Զրաղացի քարը մենակ կարողանում եր տեղից շարժել, գոմշի չափ ուժ ուներ...

Ոհան ապերը մեծ յեռանդով ու համակրությամբ եր պատմում իր հոր մասին: Իմ հարցին, թե Ոհան ապերը յերեխաներ ունի՞ր և փորանո՞ղ են գտնվում, նա պատասխանեց.

— Մեծ աղիս ուղարկեցի Յերևան, սովորեց ու դարձավ վարժապետ: Յերևանումն ե աշխատում և ասում են, փոր ուսումնով-գլխով մարդ ե: Պսակվել՝ իրեն համար ապրում ե: Մյուս աղես տեխնիկ ե: Իջևանի ջրի վրա յե աշխատում, լույս պիտի պատրաստեն մեր գյուղերի համար, ելեկտրական լույս: Մեր գյուղը շուտով լուսավորվելու յե:

Ընթրիքից հետո մեզ համար թախթի վրա իրար կողքի անկողին պատրաստեցին: Չոր խոտ դարսեցին և նրա վրա փռեցին կարպետ, իսկ գլխներին տակ մուժաքաներ և մեր պայուսակները դրինք:

Մարզիս ապերը յեղբոր հետ սկսեցին գրուցել իրենց գործերի մասին, իսկ յես և Անուշավանը դուրս յելանք ողայից վերարկուները հագած:

Դուրսը ցուրտ եր: Յերկինքը ջինջ ու պայծառ, բյուրավոր աստղերով շողշողուն: Մեր դիմացը վիթխարի ուրվականի պես լեռն եր կանգնած, փորի լանջից հովիկն եր շարունակ պլլում, գալիս ու ցուրտ համբույր գրոշմում մեր յերեսին: Իսկ ներքեը իր լայնարձակ սե թևերով փռվել եր անտառը ինչպես մի հսկայական սավեր: Ողաների շուրջը տիրում եր անդորրություն, փորը մերթ ընդ մերթ խանգարվում եր շների աղմուկով, փորոնք հաջում եյին այս ու այն կողմից:

Ոհան ապերն իր կնոջն առաջնորդեց հարևան ողան, փորտեղ միայն կանայք եյին քնում, իսկ տղամարդիկ գնացել եյին գյուղը գործով:

— Յուրտ ե, տղերք ջան, յեկեք քնեք, — առաջարկեց նա յետ դառնալով և մենք միասին ողան մտանք:

Ոհան ապերը կրակարանի միջի կուսից լեռացրեց, փորպեսզի գիշերը չմրսենք: Յեվ մենք իրար կողքի տեղավորվեցինք լայնարձակ թախթի վրա, վերարկուներս դարձնելով մեզ վերձակ: Շուտով իմ ընկերակիցներն սկսեցին խռովալ: Ողայում տաք, ախորժելի ու եր: Յես ել քնեցի: Հոգնածությունից փոսներին փռվողները անքում եյին:

Կես գիշերից փորքան եր անց, չգիտեմ, աչքերս բացի: Ինձ շատ անհանգիստ եյի զգում: Յերեկ սովոր չեյի այդ նոր միջավայրին:

Դրսից շարունակ լավում եյին շների հաջոցները, մերթ մոտիկից, մերթ հեռվից: Կարծես նրանք կասկածելի բաներ եյին նկատում և իրար իմաց եյին տալիս, նախազգուշացնում:

Միտք եյի անում անհանգիստ պառկած: Անտառը, ծառերը, մեր ճամբորդության բոլոր մանրամասնությունները շարժական պատկերների պես գալիս անցնում եյին իրար յետևից: Մեկ ել հեռվից, շատ հեռվից, խճուկ փռնոցներ լսեցի, կարծես դրանք մի տխուր, որհասական վայուն լինեյին... Լքսողությունս լարեցի, փորպեսզի ավելի լավ լսեմ: Այդ ճայնե-

ըը մերթ մոտենում եյին, մերթ հեռանում և վորոշակի տար-
բերվում եյին շան վոռնոցից:

Իմ անհանգիստ շարժումներից Ոհան ապերը զարթնեց
փողբիս, հազաց և դառնալով դեպի ինձ հարցրեց.

— Քունտ չի տանձում, վոնց ե:

— Ետ ինչ վոռնոցներ են, Ոհան ապեր, գայլերն են, —
ասացի յես հետաքրքրությամբ լցված:

— Ձե, բալամ, դրանք շներն են իրար հետ գզգզվում.
քնիր, ուշադրություն մի դարձնի, — հանգստացրեց ինձ Ոհան
ապերը և կրկին խումփաց:

Բայց Ոհան ապոր հանգստացնող խոսքերը չհամոզեցին
ինձ: Ու հազար տեսակ մտքեր յեկան և փաթաթեցին իմ ու-
ղեղը: Մտքերի ծովում լող տալով՝ յես զգացի, թե ինչպես
աչքերս փակվեցին և յես ընկա խորը քնի մեջ:

Ինձ զարթեցրին թախթի ճռճոցը և կողքիս պառկածնե-
րի շարժումները: Զարթնեցի ու նստեցի անկողնում: Ոհան ա-
պերն արդեն ողջույն չէր, իսկ Սարգիս ապերն ու Անուշա-
վանը հագնվում եյին: Թեև քունը գլխիցս դուրս չէր յեկել և
ափսպես եյի ուղում պառկել, բայց դա անհարմար համարեցի
և ընկերներից յետ չմնալով՝ վեր յելա: Դուրան անասելի աղ-
մուկ եր: Շները հաջում եյին չորս կողմից և կարծես թե նը-
րանք խմբով ինչ-վոր մեկի վրա եյին հարձակվում:

Անուշավանը դուրս թռավ ողայից:

— Վերարկուտ հագիր, բալամ, շատ ցուրտ ե, — խոր-
հուրդ տվեց ինձ Սարգիս ապերը:

Յես, իհարկե, լսեցի նրան: Վերարկուտ հագա և միասին
դուրս յեկանք: Վաղ առավոտ եր. դեռ արևը չէր ծագել: Թան-
ձըը մառախուղը ծածկել եր չորս կողմ: Ցուրտ եր և սառն ու-
ղը կծում եր յերեսս ու ձեռներս, հագուստիս արանքներից
ներս թափանցելով այրում մարմինս: Լավ եր, վոր վերարկուն
հագա, թե չե, պիտի սառնյի բոլորովին:

Լեռան անագին գաղաթը պարուրվել եր թանձր մեղով և
չէր յերևում:

Անուշավանը շնչակտոր յետ յեկավ և բավական հեռվից
կանչեց.

— Յեկեք, շուտ-շուտ յեկեք...

«Ինչ ե պատահել արդյոք»... մտմտացի ինքս ինձ և Սար-
գիս ապոր հետ քայլերն արագացրինք, համարյա թե վազում
եյինք: Ողաների շարքից դուրս գալով՝ քայլերն ուղղեցինք
անտառի կողմը: Մեր շուրջը շներն եյին վազվզում, պոչերը
շարժելով: Իսկ քիչ հեռու նրանցից մի խումբ հավաքվել՝ կար-
ծես գզգզում եյին մի բան:

Յերը մոտեցանք, մեր առաջ բացվեց հետևյալ տեսարա-
նը: Ճակատին սև-սպիտակ շերտեր ունեցող, թավ պոչով, մի
ահագին փրշոտ շուն բռնել եր մի կապտավուն գազանի կոկոր-
դից և կատաղաբար սղմել նրան գետին...

Մոխրավուն կենդանին անշարժ եր, մարմինը տեղ-տեղ
արյունոտած և ատամների բազմաթիվ հարվածներ ստացած:
Մյուս շները սատկած գազանի շուրջն եյին պտտվում գազա-
ված աչքերով, պատրաստ պատառ-պատառ անելու համար նը-
րան:

— Գեյ ե, — ասաց ինձ Անուշավանը ժպտալով և վողե-
վորված, — շունը թեև խեղդել ե, բայց վախենում ե, բերա-
նից բաց չի թողնում:

— Շունն ու գելն ենպես սոսկալի դուշման են մեկ-մե-
կու, վոր յեթե խեղդեն ել, ելի ձեռք չեն վերցնում, պոկ չեն
գալիս, — միջամտեց մեր կողքին կանգնած մի տարեց լեռնցի:

— Այ, յես քո ջանին մատաղ, կերած-խմածո կաթը հա-
լալ լինի թող, — վոգեռությամբ բացականչում եր հաստ մա-
հակով զինված մի յերիտասարդ հովիվ:


Գելխեղդ շունը նրան եր պատկանում: Դրա համար եր,
վոր յերիտասարդ հովիվը լցվել եր առանձին հպարտությամբ
և ուրախությամբ:

— Պետք ե հեռացնել շանը, թե չե կարող ե արյունը
խփել գլուխը և բոլորովին կատաղել, — խորհուրդ տվեց Սար-
գիս ապերը:

Յերիտասարդ հովիվն սկսեց գորովանքով ձեն տալ իր շանը:

— Բողար, այ Բողար...

Բայց շունը վռչ մի կերպ բաց չէր թողնում անշնչացած թշնամուն: Տեսնելով, վոր կանչելով կամ փայփայելով բան չի դուրս գա, յերիտասարդ հովիվը ձեռքի մահակով սկսեց խփել նրան:



Բողարը մի պահ բաց թողեց սատկած գազանի կոկորդը, վորի վրա ատամի խոր հետքեր կային: Մյուս շներն սկսեցին կատաղորեն հաչել: Բողարի աչքերն այնպես եյին հուրհրատում, վոր կարծես բոցավառ աստղեր լինեյին: Նա յերկու անգամ պտույտ գործելով լեշի շուրջը, դարձյալ բռնեց նրա կոկորդից:

Սարգիս ապերը, վոր ավելի կյանք տեսած ու փորձված մարդ էր, առաջարկեց փայտով ծեծել սատկած գազանին, վորպեսզի շները հանգստանան:

Յերիտասարդ հովիվն ու Անուշավանը մահակով անխնա

հարվածներ տեղացին լեշի վրա: Բողարը մի քիչ հանդարտվեց և բաց թողեց գայլի կոկորդը:

— Հիմի վոտներից բռնեցեք և շների աչքից հեռացրեք, — խորհուրդ տվեց Սարգիս ապերը:

Հովիվն ու Անուշավանը սատկած գազանի վոտներից բռնեցին և տարան դեպի ողաները: Ճանապարհին նրանց հանդիպեցին յերկու շուն, վոր նոր եյին գալիս դեպքի վայրը: Տեսնելով գայլը, ինքնապաշտպանության բնազդից դրդված այս ու այն կողմ փախան սաստիկ գելհաջով:

Իրենց ողայի յետև մի փոքրիկ խոզաբուն կար. յերիտասարդ հովիվը գայլի լեշը գցեց այնտեղ և խոզաբնի բերանը ծածկեց տախտակով ու քարերով, վորպեսզի շների խաղաղվելուց հետո, դուրս բերեն լեշը և մորթին հանեն վրայից: Բայց շները շուտով չխաղաղվեցին. նրանք չորս կողմից շղթա կադմած՝ հսկում եյին աշաւուրջ: Իսկ ողայի առաջ յերիտասարդ հովիվը մեծ յեղբայրը մորթել էր խոզի մի փոքրիկ ճուռ և կաշին քերթում:

— Մի պատմի տեսնենք, Սաքո, ետ վոնց յեղավ, վոր գելն անտառից դուրս պրծավ և յեկավ ընկավ ձեր ճանկը: Վաղո՛ւց ե, վոր ետ տեսակ բան չէր պատահել, — հարցրեց Սարգիս ապերը:

— Եսպես պատահեց, — սկսեց պատմել յերիտասարդ հովիվն իր մահակին կոթնելով և արևակեզ, անմաղ դեմքին պատկերացնելով բարեհամբույր մի ժպիտ, — իրիկունը վռչխարի կշտից իջա յեղբորս մոտ. ընտանեկան գործ ունեյինք իրար հետ, խոսեցինք ու պառկեցինք քնելու: Լույսը չբացված, դեռ գիշերը չէր հավաքել իր փեշերը, յերբ շներն սկսեցին սոսկալի հաչել և հաչելով վազել անտառի կողմը: Բողարն էլ, վոր հետս եյի բերել և իրեն համար նստել էր ողայի մոտ, վեր թռավ ու վազեց շների յետևից: Շատ չանցած, խոզաբնից լսեցինք խոզի ճուռի անհանգիստ մոմոցը: Յեղբայրս էլ զարթնեց և ասաց. «Այ տղա, եստեղ մի բան կա...»: Ես ասելն ու մի թրխկոց լսելը մեկ յեղավ, իսկույն վեր թռա տեղիցս ու փետս վերցրած դուրս յեկա, ախպերս էլ ինձ հետ: Ի՞նչ տես-

նենք գելը բացել եր խոզաբնի դուռը և դուրս եր քաշում խոզի ճուռը, վոր մոմռում եր սաստիկ թարտալով: Վզիցը բռնեց ու դեպի անտառի կողմն ուղղվեց գելը: «Բողար, Բողար...» կանչեցի յես ու սուկեցի: Իմ ձենից Բողարն ու յերկու ուրիշ շուն անտառի կողմից վազեցին յեկան և գելին առան իրենց մեջ: «Բողար, բռնի, այ քեզ մատաղ, բռնի հա...» կանչեցի յես և յեղբորս հետ վրա տվինք:

«Շները սիրտ առան և իրենք ել վրա տվին: Գելը բաց թողեց խոզի ճուռը և իր սուր ատամով խփեց Սիսակենց Մեխակի շան մեջքին: Խեղճ շունը սաստիկ ցավից կնձկնծալով հագիվ ազատվեց և փախավ, յերևի սատկած ու մի տեղ վեր ընկած կլինի: Գելը վազեց դեպի մյուս շունը. հենց են ե, ատամով խփելու յեր նրան, յերբ Բողարը յետևից թռավ և պինդ բռնեց գելու վզից... Մի քանի շուն ել ողնության հասան: Մենք ել, յես ու ախպերս, տուր թե կտաս. փետով սկսեցինք խփել գազանին: Բողարս ել սիրտ առավ և ինչքան գելն աշխատեց դուրս պրծնել նրա ատամներից, հնար չեղավ... Փայտի հարվածներից նրա գլուխը շժմեց, խոխուաց, խոխուաց ու սատկեց. ել կարող եր սաղ մնալ... Բանը նրանումն եր, վոր անտառի փեշին գելի մյուս ընկերները զբաղեցնում էին շներին, իսկ ես անտերն առիթից ոգավելով յեկել եր խոզի ճուռը տանելու: Ո՛ր, խորամանկ գազան ե գելը: Նա իր հաշիվը գիտի: Նրա դեմ կովելու համար պետք ե շարունակ արթուն հսկել, թե չե մի տեղից վրա կպրծնի... Գելի մյուս ընկերներն անտառի միջից վռնացին ու վռնալով փախան պահ մտան: Իսկ խոզի ճուռը, վոր կիսախեղդ եր յեղել գելի ատամների տակ, ախպերս իսկույն մորթեց ու հրեն կաշին քերթում ե... Շապես բաներ, — վերջացրեց իր պատմութունը Սաբոն և մտավ ոդան:

Մի քանի բոլե չանցած, նա կրկին դուրս յեկավ ողայից մի աման կաթով, Բողարին կանչեց իր մոտ և տվեց նրան, վոր ուտի: Գամփոն սկսեց ախորժակով լակել կաթը:

— Թող ուտի, հալալ ե. չարչարվել ե խեղճը. հեշտ բան չի գելի հետ կովելը, — ասում եր Սաբոն ժպտալով:

Յերբ մենք վերադարձանք մեր ոդան, մեր շուրջն արդեն պայծառ լույս եր և նորածագ արեգակի ճառագայթներն ընկել էին ու վոսկու պես պսպղում լեռան բարձր գագաթին: Անտառի վրայից մառախուղը քաշվել եր և պատկերվում եր ծառերի մուգ-կանաչ գույնը:

Անուշավանը սափորով շուր բերեց և ողայի առաջ, կանաչների վրա յերեսներս ընկնիք սառը ջրով: Հետո ներս մըտանք նախաճաշելու: Ալմաստ մորթուրը մեզ հյուրասիրեց թարմ կաթով և սերով:

Նախաճաշի ժամանակ մենք պատմեցինք Ոհան ապորը՝ մեր տեսած դեպքը: Ոհան ապերն ուրիշ տեղ եր գնացել ու չգիտեր պատահարի մասին: Նա ժպտաց և պատասխանեց.

— Դե, սար տեղ ե, ամեն բան կպատահի:

* * *

Հիանալի տեղ ե նրանց յայլան: Ալպիական կանաչագեղ լեռան լանջին մի ընդարձակ սարահարթ. ներքև, ձորն ի վար անտառն ե ձգվում, իսկ վերևը լեռների գագաթներն են շարք առ շարք կանգնել ուս-ուսի տված:

Անուշավանի հետ զբոսնում էինք թարմ ողի մեջ, ողաների շուրջը: Մեր վոտների տակ կանաչ խոտերն էին ձկուռ իրենց դալար մեջքը, իսկ նրանց վրա հակինթի պես դեռ պղսպղում էին յեղյամի փոքրիկ կաթիլները:

Արևն արդեն մի քանի թիզ բարձրացել եր յերկինքն ի վեր, յերբ Սարգիս և Ոհան ապերները միացան մեզ և առաջարկեցին գնալ իրենց հետ:

Յեմ մենք հանդարտ քայլերով սկսեցինք քայլել լեռան լանջի ուղղությամբ դեպի արևմուտք: Լեռնային արևի շողերն առատորեն թափվել էին մեզ վրա և մենք մեծ բավականությամբ գնում էինք նրանց ախորժեղի ջերմությամբ պարուրված:

Հիանալի տեսարան եր մեր շուրջը: Կանաչածածկ շրջապատը թավիշի պես շոյում եր մեր աչքը: Իսկ չարածճի գեփյունն իր զով թեկերով շարունակ սլսլում եր, սլսլում:

Արդեն մեր յետևն էինք թողել ողաների շարքը: Սարի կանաչագեղ լանջին փոխարինեցին փոքրիկ բարաժայտեր, իսկ

նրանց արանքում խորխորատներ, ցամաքած ջրերի հուներ: Մի վտիտ առվակ կշկշալով իջնում եր ձյունի շերտերից և գնում-կորչում անտառի թավուտների մեջ:

Մենք անցանք այդ առվակը և քարաժայռից սաստիկ հաշելով ներքև վազեցին յերեք գամիւռ: Ոհան ապերը թուրքերեն լեզվով կանչեց և շները դեռ մեզ չհասած, քարաժայռի գլխին հայտնվեց մի թուրք հովիվ, վորը յետ կանչեց շներին: Վերջիններս թեև հանդարտվեցին, բայց կասկածոտ աչքերով ուղեկցելով մեզ վերև բարձրացան:

Քարաժայռի գլխին կանգնած հովիվը թուրք դեմքով, խոշոր չուռ փափախը գլխին, կարճբոյ յերիտասարդ եր:

— Սախլասըն, յուդաշ (բարի աջողում, ընկեր), — մտերմաբար բացականչեց Ոհան ապերը, յերբ մենք մոտեցանք նրան:

Մենք ևս բարեկեցինք: Թուրք հովիվը սիրով ընդունեց մեր բարևը: Նրանից փոքր ինչ հեռու մի քանի տասնյակ վոշխար արածում եյին խոտերի մեջ ցրված:

Շարունակեցինք մեր ճանապարհը: Իսկ լեռան գագաթն անդադար հետևում եր մեզ արթուն պահակի պես, հենց մեր կշտին: Մեր առաջ բացվեց մի նոր կանաչագեղ լեռնահարթ, վորտեղ բազմաթիվ վրաններ եյին զարկած:

— Այստեղ Ղազախի շրջանի Ք... գյուղի գյուղացիներն են ամեն ամառ գալիս յայլա իրենց անասուններով: Մեր և նրանց արոտատեղիները կպած են իրար և դրա համար ել մենք չափազանց մոտ հարաբերության մեջ ենք գտնվում թուրք գյուղացիների հետ, — պատմում եր Ոհան ապերը ճանապարհին:

Մենք հասանք վրաններին: Վրաններից մի քանիսի յետև կանգնել եյին սայլերը զանազան իրերով ծանրաբեռնված:

Մի մոխրավուն վրանի մոտից վեր թռավ բավականին տարիքոտ միջահասակ մի մարդ և ուրախ-ուրախ ընդառաջելով մեզ, բռնեց Ոհան ապոր ձեռքը:

— Վայ, բարով յեկաք, բարով, հազար բարով. ետ վոք

քամին ձեզ բերեց մեր կողմը, — բացականչեց նա հրճվալից ձայնով:

— Յեկանք, վոր տեսնենք մեր բարեկամն ինչպես ե. յե. կանք քո ազիդ քեֆը հարցնելու, յուդաշ Շամիլ, — պատասխանեց Ոհան ապերը վոչ պակաս խնդությամբ:

Շամիլը սիրով վողջունեց Սարգիս ապորն ու Անուշավանին և դառնալով դեպի ինձ՝ տարակուսանքով նայեց:

— Ծանոթացիր, մեր բարեկամն ե, քաղաքիցն ե յեկել, — ներկայացրեց ինձ Սարգիս ապերը:

— Հա, շատ ուրախ եմ, շատ, — բացականչեց Շամիլը և իմ թեև մի պահ զգացի նրա յերկաթյա ձեռքի մեջ, վոր սեղմեց պինդ, ցավացնելու չափ:

Հետո բաց թողեց թև և առաջարկեց հետևել իրեն: Միջահասակ, լայն ուսերով, պղնձագույն դեմքով մոտ հիսուն տարեկան մարդ եր Շամիլը, կենսուրախ ու շարժուն:

Նա մեզ առաջնորդեց իրենց վրանից բավական հեռու, մի կանաչախիտ տեղ, անտառին մոտիկ:

— Դուք ետեղ մի քիչ զբոսնեցեք, յես ես ե գալիս եմ, — ասաց Շամիլը և քայլերն ուղղեց դեպի իրենց վրանը:

— Շամիլ ջան, ուր ես գնում, յեկ մի քիչ զրուցենք ու գնանք, — ձայնեց նրա յետևից Ոհան ապերը:

— Վահ, ետ ինչեր ես ասում, այ մարդ. դուք ինձ մոտ հյուր դաք, յես ձեզ առանց պատվելու, հյուրասիրելու բաց թողնեմ. Դա լաված-իմացված բան է: Բա, առանց իմ աղ ու հացն անուշ անելու վեր նենաք գնաք, — պատասխանեց Շամիլը նեղացած և շարունակեց իր ճամբան:

— Նա վոչ մի դեպքում առանց պատվելու և հյուրասիրելու չի թողնի, վոր գնանք: Պետք ե սպասել, — ասաց Ոհան ապերը և սկսեց պատմել ինձ Շամիլի հետ ունեցած իրենց բարեկամությունը:

— Մենք Շամիլի գերդաստանը վաղուց, շատ վաղուց ենք ճանաչում: Իմ հայրն ել նրա հոր հետ մոտիկ եր, շարունակ գնում-գալիս եյինք: Նրա հայրը, Մուստաֆան, շատ ազիդ մարդ եր, ընկերասեր, հյուրասեր: Ինքը միջակ տնտեսություն ու-

նեցող ռանչպար մարդ եր, իր քրտինքով ապրող: Բեգերին և աղաներին սաստիկ ատում եր, և միշտ խոսափում նրանցից. «Նրանք աշխատավոր, քյասիբ գյուղացու արյուն ծծողներ են: Ուրիշներն որնիբուն բանում, քրտինք են թափում, իսկ նրանք ուտում-վայելում են. նրանց քոքը կտրվի թող...», ասում եր շարունակ Մուստաֆան: Նա մի չափազանց սիրուն աղջիկ ուներ, վարդի պես գեղեցիկ: Իրենց գյուղի աղայի տղան շատ հավանելով այդ աղջկան, մի որ հարմար առիթ ե գտնում և փախցնում ե: Մուստաֆան ու Շամիրը չափազանց գոգովում են և վորոշում ինչ գնով ել լինի վրեժխնդիր լինել, իրենց վտանահարված պատիվը վերականգնել: Գիշերով գինված հարձակվում են աղայի տան վրա, ներս մտնում, ծանր կերպով վիրավորում են աղային, սպանում նրա վորդուն և վերադարձնում աղջկան: Աղան ստացած վերքերից մեռնում ե, իսկ Մուստաֆան ու Շամիրը դաշաղ են դառնում ու փախչում, Բագնվում մեր անտառներում: Աղայի մահից հետո, գյուղացիները շանգիստ շունչ են քաշում, ազատվում են այդ գիշատիչ կալվածատիրոջ ճանկերից և մեծ համակրությամբ ու սիրով լցվում դեպի Մուստաֆան ու Շամիրը: Նրանց ծածուկ ոգնում են ուտելիքով, հագուստով: Մենք ել եյինք նրանց ծածուկ ոգնում, հաց ուղարկում, վորպեսզի չբռնվեն ու սովամահ չլինեն: Սակայն աղայի ազգականները կարողացան գտնել նրանց անտառում և կռվի բռնվել նրանց հետ: Այդ կռվում Մուստաֆան սպանվում ե, իսկ Շամիրն անտառի խորքերում թաքնվելով կարողանում ե ազատվել: Գիշերը նա իշավ մեր գյուղը և յես մի քանի որ ծածուկ պահեցի ու զրանով հետքը կորցրի: Թագավորին թախթից գցելուց հետո, Ղազախի գյուղացիները քչեցին աղաներին ու բեգերին և հողերը բաժանեցին իրենց մեջ: Շամիրն ազատվեց և վերադարձավ տուն: Նրա տան գործերը քարուքանդ եյին յեղել արդեն և ընտանիքն ընկել ծայրահեղ չքավորության գիրկը: Շամիրն իր աշխատանքով կարողացավ կարգավորել իր գործերը: Այժմ նա կոլխոզի անդամ ե և մեծ պատիվ ու հարգանք ե վայելում իրենց շրջանի գյուղացիների մեջ...

Շուտով Շամիրը վերադարձավ կապերտով ու մութաքաներով ծանրաբեռնված:

— Ետ ինչի՞ մասին եյիր եղպես յեռանդով պատմում, Ռհան ապեր, — հարցրեց նա՝ կապերտն ու մութաքաները տեղավորելով կանաչների վրա:

— Հորդ մասին եյի պատմում: Պատմում եյի, թե հանգուցյալն ինչ ջանով մարդ եր, հարամություն չսիրող, խեղճ, աշխատավոր մարդու համար իր կյանքը չխնայող պատվական մարդ...

— Ո՛ր, իմ հանգուցյալ հայրս ուրիշ մարդ եր: Յերանի սաղ մնար կամ գլուխը հողի տակից մի բարձրացներ ու տեսներ ես մեր լեն Բու աշխարհը, արյուն ծծող աղաներից ու բեգերից, պրիստավից ու քյոխվից մաքրված աշխարհը...

Շամիրի յերիտասարդ տղան սինու վրա նոր թխած հացեր և խորոված միս դարսած յեկավ մեզ մոտ:

— Ո՛ր, բարե Ահմեդ ջան, քեֆդ ինչպես ե, այ բալա, — հարցրեց Ռհան ապերը, մտերմաբար խփելով նրա ուսին:

— Շատ լավ ե քեֆս, Ռհան ապեր, դու սաղ լինես. — պատասխանեց Ահմեդը սիրալիբ և սինին դնելով խոտերի վրա, մոտեցավ ու բարեկամաբար սեղմեց մեր ձեռքը:

Նա մեզ հասակակից, բարեձև մարմնով, բարձրահասակ տղա եր, թուխ, համակրելի դեմքով և բավականին կոկիկ հագնված: Սովորում եր Ղազախի գյուղատնտեսական տեխնիկումում: Մոխրագույն պինջակի կրճքին կոմյերիտական նշան եր կպցրել, իսկ գլխին ամփոփել եր սև գանգուր մագեր:

Մենք իսկույն մտերմացանք իրաք հետ և մեր մեջ սկիզբեց ընկերական մի զրույց մեզ հետաքրքրող բազմաթիվ խոդիրների մասին:

* * *

Շաշից հետո յես և Անուշավանն Ահմեդի առաջնորդությամբ մի հաճելի զբոսանք կատարեցինք. իսկ մյուսները նրա տած զրուցում եյին իրենց հետաքրքրող հարցերի շուրջը:

Ահմեդը տարավ մեզ անձոռնի ու բարձրադիր քարաժայռի

մոտ, վորի տակից մի փոքրիկ աղբյուր եր գլգլում: Աղբյուրի
ակունքին յեղեգնյա մի ծորակ եր ամրացրած, վորից բարակ
շերտով չռում եր ջուրը: Անմեղը գրպանից հանեց փոքրիկ բա-
ժակը, լցրեց և տվեց ինձ: Յես մի կում միայն կարողացա
խմել, ատամներս զլզլացին, կոկորդս սառույց կարեց այդ ջը-
րից:

— Հը', — բացականչեց Ահմեդը ծիծաղելով, — դժվար է խմել. տեսնո՞ւմ ես ինչ անմահական ջուր ունենք:

Անուշավանը կարողացավ մի կերպ խմել կես բաժակի
չափ:

— Ոխան, այ քեզ հրաշալի ջուր, — վոգեորդեց Անուշա-
վանը:

— Լազարժ, — ճայն տվեց Ահմեդը և քիչ-քիչ կուլ տվեց մի ամբողջ բաժակ այդ ջրից։

Յես դարձյալ փորձեցի և այս անգամ ինձ հաջողվեց կես
բաժակի չափ խմել:

— Մեզ մոտ մի գյուղատնտես կա, վոր ես տեսակ սառը ջրի մեջ կարողանում ե լողանալ, — ասաց Անուշափանր:

— Յերկաթե առողջութեան տեր պիտի լինեյ, վորպեսզի կարենի լինի զիմանալ այդ սառույցին, — միջամտեցի յես զարմացած:

— Դե, զարմանալու վոչինչ չկա, յեթե մարմինդ սովորի, կարող ե գիմանալ, — պատասխանեց Ահմեդը:

Արեւն իջավ լեռան կողմից և վոսկե ջահի պէս կախվեց
ձորի վրա:

Մենք լավ տրամադրութեամբ վերադարձանք աղբյուրի մօտից: Մերոնք արդեն վեր ելին կացել և շնորհակալութիւնն ելին հայտնում Շամիլին՝ նրա ցույց տված սրտագին ընդունելութեան համար:

— Բարով զնաք, ախպերս, աչքիս վրա միշտ տեղ ունեք։
Թող ձեզ նման ազնիվ հյուրերը շարունակ անպակաս լինեն, —
ասում էր Շամիրը, ուղեկցելով մեզ։

Հասնելով մինչև իրենց արտատեղերի սահմանը, Շամիրը

բաժանվեց մեզանից, իսկ Անմեղն ուղեկցեց մեզ դեռ ավելի հեռուն, մինչև յերևացին մեր ոգաները:

— Դեհ, հիմա ինձ ներեցե՛ք, յես պետք է յետ դառնամ,

— ասաց Ահմեդը, սեղմելով մեր ձեռները:

— Ահա՛նո, վոր բաժանվում ենք, — բացականչեցի յես պինդ, շատ պինդ սեղմելով նրա ձեռքը:

— Վաղը յես կանցնեմ՝ ձեզ մօտ, կղնանք միասին պըտույտի, — պատասխանեց Սհմեղը ժպտալով և յետ դարձավ արագ քայլերով։

✻

Փեղեցիկ եր գիտել վերջալուսը լեռան այդ բարձր լան-
ջից: Արեւ պահվել եր լեռների կոճակը և նրա ցուրբերը մար-
մրում ելին ծառերի կանաչ մշուշում, իսկ հորիզոնը դարձել
եր ինչպես մի հուրհրան քուրա:

Ահա արոտատեղերից իջավ կոլխովի նախիրը: Կովերը քայլ-լուսմ եյին ծանր, համրաքայլ: Կարծես թե մի խորհրդավոր տեղ եյին գնում: Հանդիսավոր տեսք ունեյին: Յերբեմն-յերբեմն կանգ եյին առնում, բութ աչքերով նայում աջ ու ձախ, բեմն կանգ եյին առնում, բութ աչքերով նայում աջ ու ձախ, ինչ-վոր մտքերի յետեից ընկած, ապա կրկին ծանր-ծանր առաջ շարժվում: Ամբողջ որն ալպիական լեռների թարմ, հյուսիս շարժվում: Ամբողջ որն ալպիական լեռների թարմ, հյուսիս շարժվում: Ամբողջ որն ալպիական լեռների թարմ, հյուսիս շարժվում:


Նրանցից հետո անհանգիստ շարժումներով, աղիողորմ բառաչներով հորթներն ու յերինջներն ելին գալիս, մկկալով ու առձիկ տալով գառները խումբ առ խումբ, ապա վոչխարի հոտերը՝ ամեն կողմից շներով շրջապատված։

Յեկավ նաև հովիվ Սաքոն իր վոչխարները հետ: Նրա կող-
քին ծանրաքայլ, խոհուն աչքերը կիսախուփ քայլում եր Բո-
ղարը՝ շարժելով իր թավ, սպիտակ պոչը: Նա մի պահ կանգ
առավ հաղթական, նայեց աջ ու ձախ, մեզ վրա, անտառի
կողմը և ապա կրկին շարունակեց իր ճանապարհը գիւրքերը
չլքող ռազմիկի համառությամբ:

Հովատարիմ գամփոք քայլում եր հանդարտ ու վեհանձն
իր ուժին վստահ...

Վերջան հետաքրքիր տեսարան, ինչ աշխուժ իրարանցում

եր ընկել, յեռուզեռ յալլայում: Կարծես մի մեծ մըջնանոցումն
ես գտնվում, վորտեղ յուրաքանչյուրը լավ գիտե, թե ինչ պի-
տի անի: Անասունները գիտեն, թե ամեն մեկը նրանցից ուր



պիտի գնա: Ու ամեն մեկը նրանցից անմոռնչ կատարում է
իր դերը, այդ ընդհանուր կյանքի ու յեռուզեռի մեջ սահ-
մանված իր դերը:

Իրիկունն իջավ մեղմիվ, աստղերը շողացին պայծառ. ոգն
սկսեց ցրտել, և մենք հանդարտ քայլերով վերադարձանք ուղան:

* * *

Հետևյալ առավոտ նախաճաշից հետո յես և Անուշավանը
գուրս յեկանք զքոսանքի, իսկ Ոհան ու Սարգիս աղերներն
ինչ-վոր գործով գնացին մի այլ տեղ: Մենք ուզում էյինք
գնալ Ահմեդին վերցնելու, բայց լավ յեղավ, վոր Ահմեդն ինքը
յեկավ: Մենք չափազանց ուրախացանք տեսնելով նրան, սըր-
տազին բարեկեցիք իրար: Յես առանձին շերմությամբ վող-
ջունեցի նրան: Անուշավանն առաջարկեց գնալ անտառի խոր-
քերը պտուկտի:

— Յեկեք բարձրանանք սարի զագաթը և այնտեղից դի-
տենք հեռավոր հորիզոնները, դա ավելի հեռաքրքիր կլինի, —
ասաց Ահմեդը:

Մենք հավանություն տվինք նրա առաջարկին և քայլերն
ուղղեցինք այդ ուղղությամբ: Բավական գնացինք հարթավայ-
րով, հետո սկսեցինք բարձրանալ զառիվերը: Չորս կողմ կա-
նաչ արոտներ էյին և անասուններն արածում էյին յեռան-
դով: Մենք բարձրանում էյինք համրաքայլ: Յերբեմն-յերբեմն
կանգ էյինք առնում և դիտում մեր շրջապատը: Ներքեը կա-
նաչազեղ անտառն էր իջնում, իսկ ավելի հեռուն շղթայաձև
լեռները թե-թեի տված՝ կարծես թե շուրջպար էյին կաղմել:

Ալպիական արոտատեղերին փոխարինեցին հողաթմբեր և
քարաժայռեր: Մեր դիմացը հաղթ հասակով կանգնեց մի պատ-
կառելի քարաժայռ: Մեզ թվում էր, թե բարձրանալով նրա
վրա, կհասնենք բարձունքին և կաիրենք լեռան զագաթը: Մեծ
զժվարությամբ բարձրացանք, բայց լեռան կատարը մնաց մե-
ղանից վերև...

Քարաժայռի վրայից մեր առաջ բացվեց մի ընդարձակ,
շքեղ տեսարան: Լեռների մեծ մասը մնացին մեղանից ներքև,
իսկ ձորը դարձավ ինչպես խոր անդունդ:

— Հրեն մեր գյուղը, — բացականչեց Անուշավանը զը-
վարթ ձայնով և ցույց տվեց ձորի խորքում, մի քիչ դեպի ա-
րևելք փոքրիկ, անորոշ կույտեր:

Քարաժայռի կատարից պարզ յերևում էյին Դիլիշանի,
Շամշադինի, Բարանայի և Նույնիսկ ավելի հեռավոր լեռնա-
շերտերը:

Ճանապարհն այս անգամ բարձրանում էր մերթ քաղա-
րոտ, մերթ հողային շերտով, վորի վրա վայրի խոտեր կային,
փշտոտերև բույսեր և կապույտ ծաղիկներ: Ահմեդը մեղանից բա-
ժանվեց, ավելի հեռուն գնալով մտավ մի նեղ փորվածք: Մի
պահ կոչավ մեր աչքից և շատ չանցած՝ լավեց նրա ուրախ
կանչը:

— Այս կողմ յեկեք, աղերք, այս կողմ. յես հասա արդեն
ձյան շերտին...

Մենք շտապեցինք այդ ձայնի ուղղութեամբ և, հիրավի, մեզանից վերև, լեռան հողե փորվածքում մենք տեսանք ձյունի հաստ շերտ յեռանկյունի նստած: Ահմեդը մոտեցել, ձեռքով տրորում եր նրա մակերեսը: Հասնելով սպիտակ շերտին, մենք ազանութեամբ մեր ափը վերցրինք այդ սառն նյութից, կարծես թե նոր, հենց նոր ելինք տեսնում ձյունը, այնպես ուրախ ելինք ու անհամբեր: Մեզ պատել եր բերկրանքի ու խնդութեան ժպիտը և այն վեհ գիտակցութեամբ, վոր մենք հաղթահարել, տիրել ենք այդ բարձր լեռան մեծագույն մասին և շուտով կհասնենք նրա գագաթը:

Բայց ամպերը կամաց-կամաց յեկել ծածկել ելին յերկնքի մեծ մասը և շուտով արևին պահեցին իրենց թանձր վարագույրի տակ:

— Պետք ե յետ դառնալ. ամպերը շուտով կպատեն ամբողջ յերկինքը և կարող ե անձրև դալ, — զգուշացրեց Անուշավանը:

Ահմեդը սակայն վոչ մի դեպքում չեր ուզում յետ դառնալ և համոզում եր, վոր ինչ ել լինի անպայման բարձրանանք լեռան կատարը: Յես ընկա տատանման մեջ: Անուշավանը պնդեց իր առաջարկը և առանց այլևայլի՝ սկսեց ներքև իջնել:

Յես նայեցի յերկնքին: Ամպերը գնալով խառնում ելին, դառնում պղնձագույն: Մինչ այդպես անորոշ դրութեան մեջ կանգնել ելինք, յերբ արևմտյան կողմից, հեռավոր լեռների վրա լսվեց մի խուլ դղրդյուն:

Այդ դղրդյունը վճռեց հարցը: Ահմեդը գլուխը դժգոհութեամբ թափ տալով յետ դարձավ և մենք միասին սկսեցինք ներքև իջնել:

Յերկինքը թանձր պատի նման ծանրացավ մեր գլխին: Արևելյան կողմից հորիզոնում դեռ պլլում ելին ծիրանավառ լույսերը, իսկ արևմտյան կողմից շարունակվում ելին խուլ թնդյունները: Մենք հասանք քարաժայռը և նրա քարքարոտ կողերով յեռանդով իջնում ելինք: Դեռ արտատեղերի պոռնգը չհասած՝ թանձր մառախուղն իջավ և ծածկեց չորս կողմ: Մի քանի րոպե չանցած՝ մեր գլխավերև թնդաց յերկինքը և

աչքը շրացնող լույսը պայծառորեն պատկերացրեց ամբողջ շրջապատը:

Հովիվներն ամեն կողմից շվացնում ելին և շտապով հավաքում վոչխարներին:

— Գելի լավ վախան ե, հա, — բացականչեց Անուշավանը յեռանդուն իջնելով:

— Գելերն եսալիսի ժամանակ առիթից ոգտվում են և մառախուղի մեջ կատարում իրենց արյունոտ գործը: Վայ են վոչխարին կամ գառան, վոր յետ կմնա հոտից ու ճամբան կը մոլորի, — հարակցեց Ահմեդն աշուժով:

Մենք ավելի արագացրինք մեր քայլերը: Համարյա վազում ելինք: Մեր դեմ առ դեմ մի փոքրիկ ծառ լար մեն-մենակ կանգնած սարի կանաչ դոշին: Նրա ընին կոթնած կանգնել եր մոտ տասնեւինգ տարեկան մի պատանի, իսկ նրա շուրջը բոլորվել ելին և շրջան կազմել տասներկու կով ու յեւրինջ: Տավարածը շվացնում եր շարունակ և ձեռքով կանչում մեզ: Անասունները կանգնել ելին կողք-կողքի, յետևը դարձրած դեպի ծառը, գլուխները խոնարհած ու պոզերը պատրաստ պահած, կարծես թե ուզում ելին վորևե մեկի հարձակումից պաշտպանվել: Այդ պատկերը շատ հետաքրքրեց ու զարմացրեց ինձ:

— Անպայման գայլ են նկատել հեռվում, վոր եղպես կանգնել են անասունները, — ասաց Ահմեդը և մենք մի պահ կանգ առած՝ դիտեցինք մեր շուրջը:

Բայց մառախուղն այնքան եր թանձրացել, վոր վոչինչ չկարողացանք նշմարել հեռվում:

Յերբ մոտեցանք, տավարածը դուրս յեկավ կենդանիների շրջափակից և ժպիտ հյուսելով արևից լաշված դեմքին՝ ասաց.

— Գել եր. յեկավ քարափի ծերից մոտիկ տվեց, մի քանի պտույտ գործեց ու փախավ:

— Լավ կլինի կովերը տանես ավելի ապահով տեղ, — խորհուրդ տվի յես տավարածին:

— Կարիք չկա, — պատասխանեց նա մահակի ծայրով



տրորելով խոտերը, — հրես շուտով յերկինքը կբացվի և արևը դուրս կգա. ողորստոս ամիսն է, վտանգավոր չի...

Մենք շարունակեցինք իջնել: Ավելի մոայլվեց մեր շուրջը: Շան ուժգին հաջոցներ լսվեցին և մառախուղի մեջ յերևացին չորս գամփո, վորոնք սրարշավ մոտեցան մեզ, մի քանի պտույտ դործեցին մեր շուրջը և ապա արագորեն հեռացան:

Մի քիչ ներքև մի քանի մացառ կար, իսկ նրանց շուրջը խիտ ու փարթամ մարգագետին: Այնտեղ հանգիստ արածում էր մի փոքրիկ եղ, վրան խուրջին գցած: Կենդանին աշնպես էր տարվել ուտելով, վոր իսկի չեր հետաքրքրվում, թե ինչ է կատարվում շուրջը և շարունակ փնշում էր ուռնգերից գոլորշի արձակելով ու զրանով արտահայտում ուտելու իր անսահման ցանկությունն ու ինքնաբավականությունը:

Յես և Անուշավանն Ահմեդին առաջնորդեցինք մինչև նրանց արոտավայրերի սահմանը և արագորեն յետ դարձանք: Հազիվ էյինք հասել մեր ողան, յերբ յերկինքը փայլատակեց շառ լույսով և նրան հաջորդեց ականջ խլացնող մի թնդյուն, վոր դղրդալով գնաց ու ճայթեց անտառում:

Ոգայից դուրս թռան Ոհան ու Սարգիս ապերեները և ուշադրությամբ դիտեցին շուրջը:

— Հետաքրքիր է իմանալ, թե վորտեղ խփեց կայծակը, — բացականչեց Սարգիս ապերը:

Մենք ասացինք, վոր կայծակը ճայթեց անտառում:

— Յերեկ մի ծառի խփել դարձրել է մոխիր: Անցյալ տարի յել կայծակը խփեց և մի գոմեշ սպանեց սարում, — յեղբորափականց Ոհան ապերը և առաջարկեց ներս գնալ ճաշելու:

Նրանք դարձյալ ներս մտան, իսկ յես և Անուշավանը մընացինք պղնձացած յերկնքի տակ: Կրկին գոռգոռաց յերկինքը և սկսեց կարկուտ թափվել, ամեն մեկը մի սխեռի ճափ: Գրեթե ու վիզս անխնա ծեծկոտվեցին կարկտի հարվածներից: Մտանք ողան և բաց դռնից դիտում էյինք բնության տարերքը: Յերկու բողե հազիվ տեսեց կարկուտը. նրան հաջորդեց հորդ անձրևը: Վորոտույնները թեև հաճախակի դարձան, բայց

նրանք կամաց-կամաց հեռանում էին, թուլանում, գնում դեպի հյուսիս-արևելք:

Յերկնքի թանձր պատը ճեղքվեց և ծիրանավառ շերտեր յերևացին այնտեղ:

— Ես ե՛կ երացվի յերկինքը, — ասաց Ոհան ապերը, վոր շատ անհանգիստ եր դուրսը մնացած անասունների համար:

Հիրավի, յերկինքն արագորեն պարզվում եր: Թանձրախիտ ամպերը մի անձանոթ, հզոր ձեռքով անշատվեցին իրարից, պատառոտվեցին, ցրիվ յեկան և նրանց արանքից ժպտաց արեգակը վոսկեպայծառ շողերով: Մառախուղը ցրվեց և յերկնքի վրա, արևելյան ուղղությամբ կամարակապ գծադրվեց ծիածանը, ինչպես ծիրանի ժապավեն:

Շուտով անձրևը դադարեց և ամբողջովին պարզվեց յերկինքը:

— Ոգոստոս ամիսն այսպես գիտե, ամպ, վորոտումն ու անձրեփն արագ կերպով կգան ու կանցնեն, — ասում եր Սարգիս ապերը յերկինքն ի վեր նայելով:

Ոհան ապերը մեզ առաջարկեց ճաշել և չսպասել իրեն, իսկ ինքը վրան քաշեց յափնջին ու դուրս յեկավ ողախից: Շատ անհանգիստ եր. ուզում եր գնալ անասունների մոտ: Թեև քաղցած էինք, բայց մենք ել վերարկուները հագանք և հետեցինք նրան: Խոտերի վրա, այս ու այն տեղ, տակավին պսպղում էին կարկուտի սպիտակավուն շերտերը: Իսկ լեռան վրայից ջրերը կատաղի թափով ներքև էին իջնում և գլխապատառ վազում դեպի ձորը:

Վոսկեփրփուր արևը կրկին շողաց յերկնքում և իր ջրմառատ շողերով տաքացրեց մեզ:

Մենք հասանք սարի պուռնդը և սկսեցինք բարձրանալ: Մեր վոտները բոլորովին թրջվել էին, բայց հվ եր ուշադրութուն դարձնում:

Այս ու այն տեղ խմբված, թուփ յեղած անասուններն արդեն ցրիվ էին յեկել և արածում էին հանդարտ: Մեր ծանոթ տավարածն ել թեև թրջված՝ բայց ուրախ-ուրախ դիմավորեց մեզ:


— Հը՛, — հարցրինք մենք հետաքրքրությամբ, — վհնց ես:

— Լավ, ձեր արևը թող միշտ վառ մնա, վողջ և առողջ եմ, — պատասխանեց տավարածը ժպտալով և ցույց տալով իր սպիտակ ատամները, — իմ անասունները հափազանց խելոք բոլորվել էին ծառի մոտ, իմ շուրջը և մնացին այդպես մինչև վոր կարկուտն ու անձրևը վերջացան:

— Ել գելը չերևցա:

— Ձե. ել չերևաց. յերևի սիրտ չարեց մոտ գալ:

Սարգիս և Ոհան ապերները շարունակեցին ճանապարհը, իսկ յես և Անուշավանը մեր քայլերն ուղղեցինք անտառի կողմը: Ճանապարհին մենք կրկին հանդիպեցինք մացառների մոտ արածող ելին, վոր նույն վոզեորությամբ և աշխուժությամբ



արածում եր խոտը՝ իսկի ուշադրութուն չդարձնելով, թե ինչ ե կատարվում շուրջը: Նրա համար մեկ եր, քանդվում ե աշխարհը թե չե, թող միայն թույլ տան ուտի...

Անտառը թաց եր: Խոտերի և ծառերի տերևների վրա դեռ պսպղում էին անձրևի կաթիլներն արծաթի պես:

Մենք չմտանք նրա խորքերը չթրջվելու համար և հանգարտ քայլերով յետ դարձանք անձրևից հետո պայծառորեն ժպտացող մեր շրջապատի պես զվարթ:

* * *

Առավոտը յես և Անուշավանը սպասում էինք Ահմեդին, փորպեզի միասին գնանք զբոսանքի: Սակայն Ահմեդը չերեկաց. յերևի մի փորեկ կարևոր գործի պատճառով չեր կարողանում գալ: Յեվ մենք յերկուսով փորոշեցինք այցելել կուռնատեսության անասնաբուժական կայանը, փոր գտնվում եր մոտակա լեռնահարթում և հետզհետե ծավալում եր իր աշխատանքները:

Մի կանաչապատ վայրումն եր կուռնատեսության կայանը: Մի քանի նորակառույց շինություններ կային այնտեղ: Մի քարաշեն տուն, փոր ծառայում եր իբրեւ պահեստատուն, իսկ կողքին փայտաշեն սրահում շարունակ բանում եր կաթնագործ մեքենան իր ականջ խլացնող աղմուկով: Գլխավորապես կանաչք էին աշխատողները. կաթսաներով կաթ էին բերում, յուղ ու պանիր պատրաստում. յեռուզեռն անպակաս եր այնտեղ: Տղամարդիկ մեծ մասով արոտավայրերումն էին, անասուններին հետ:

Մյուս տախտակաշեն շենքը զանազան նպատակների յեր ծառայում: Այնտեղ և՛ գրասենյակ եր, և՛ ճաշավայր, և՛ կուլտանկյուն: Մի յերկար սեղան եր զբաղած, շուրջը նստարաններ, վրան մի քանի հին թերթեր և ժուռնալներ: Այնտեղ մեզ դիմավորեց Յերևանի անասնաբուժական ինստիտուտն ավարտած յերիտասարդ մասնագետ Սուքիասյանը: Վերին աստիճանի աշխուժ ու զվարթ մարդ եր Սուքիասյանը: Նա մեզ առաջարկեց նստել, մի քանի տեղեկություններ ավելց կուռնատեսության անասնապահական գործի զարգացման և բարելավման մասին ու խնդրեց ոգնել իրեն պատի լրագիր պատրաստելու և լուղունգներ գրելու գործում:

— Յես այսոր մտածում էի այդ մասին, բայց մենակ

դժվար եր գլուխ բերել այդ աշխատանքը. լավ ե, դուք կոգնեք ինձ, — ասաց նա ուրախ-ուրախ:

Մենք սիրով ընդունեցինք այդ առաջարկը և յեռանդով անցանք գործի: Պահեստապետը մեզ թուղթ ու թանաք բերեց և յերեքովս մի քանի հակիրճ, բայց բովանդակալից հոգվածներ գրեցինք, փորոնց մեջ մենք շոշափում, պարզաբանում էինք զլխավորապես անասնապահության զարգացման հետ կապված հարցերը:

Մեր ժաքրագրած թերթիկները Սուքիասյանը խնամքով փակցրեց մի գունավոր սովորաթղթի վրա: Մնում եր խոշոր տառերով թերթի անունն ու լուղունգները գրել: Սակայն զրահամար համապատասխան թանաք ու գրիչ եր պետք: Սուքիասյանը դես ու դեն ընկավ և պահեստատան մի անկյունում կարողացավ գտնել թղթի մեջ փաթաթած սև թանաքի չորացրած կտորներ, փորոնք մանրելով հալեցինք ջրի մեջ և ստացանք մեր ցանկացած թանաքը: Անուշավանը մի բարակ փայտաշեց, դարձրեց սրածայր, գրչի ձև տվեց և սկսեց խոշոր տառերով արտագրել մեր կազմած լուղունգները: Պետք է ասել, փոր Անուշավանը համեմատաբար ավելի զեղեցիկ ձեռագիր ունեւր և ավելի արագ ու վարժ եր գրում:

«ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԱՆԱՍՆԱԴԱՅ»

Այսպես կնքեցինք լրագրի անունը և լուղունգների հետ միասին կպցրինք պատին: Ամբողջ այդ աշխատանքը մենք կատարեցինք առանձին յեռանդով ու փոքեցրություն: Իսկ Սուքիասյանն աշխատանքի ընթացքում զանազան սրամիտ առակներ եր պատմում և ուրախ կատակներ անում և այդ զվարթ մթնոլորտում իսկի չիմացանք, թե ինչպես անցավ ժամանակը:

Աշխատանքը վերջացնելուց հետո մեզ հյուրասիրեցին ճաշով: Գոմշի հիանալի մածուն բերին, անուշահամ սեր ու կարագ և մենք մեծ ախորժակով կերանք:

Ճաշից հետո Սուքիասյանի հետ փորրիկ զբոսանք կատա-

Մենք չմտանք նրա խորքերը չթրջվելու համար և հանգարա քայլերով յետ դարձանք անձրևից հետո պայծառորեն ժպտացող մեր շրջապատի պես զվարթ:

* * *

Առավոտը յես և Անուշավանը սպասում էյինք Ահմեդին, փորպետի միտախն գնանք զբոսանքի: Սակայն Ահմեդը չերեկաց. յերևի մի փորեկ կարևոր գործի պատճառով չեր կարողանում գալ: Յեվ մենք յերկուսով փորոչեցինք այցելել կուտնտեսության անասնաբուծական կայանը, փոր գտնվում եր մոտակա լեռնահարթում և հետզհետե ծավալում եր իր աշխատանքները:

Մի կանաչապատ վայրում եր կուտնտեսության կայանը: Մի քանի նորակառույց շինություններ կային այնտեղ: Մի քարաշեն տուն, փոր ծառայում եր իբրև պահեստատուն, իսկ կողքին փայտաշեն սրահում շարունակ բանում եր կաթնագործ մեքենան իր ականջ խլացնող աղմուկով: Գլխավորապես կանայք էյին աշխատողները. կաթսաներով կաթ էյին բերում, յուղ ու պանիր պատրաստում. յեռուզեռն անպակաս եր այնտեղ: Տղամարդիկ մեծ մասով արտավայրերում էյին, անասունների հետ:

Մյուս տախտակաշեն շենքը զանազան նպատակների յեր ծառայում: Այնտեղ և՛ զրահենյակ եր, և՛ ճաշավայր, և՛ կուլտանկյուն: Մի յերկար սեղան եր զբված, շո-րջը նստարաններ, վրան մի քանի հին թերթեր և ժուռնալներ: Այնտեղ մեզ դիմավորեց Յերևանի անասնաբուծական ինստիտուտն ավարտած յերիաասարդ մասնագետ Սուքիասյանը: Վերին աստիճանի աշխուժ ու զվարթ մարդ եր Սուքիասյանը: Նա մեզ առաջարկեց նստել, մի քանի տեղեկություններ ավեց կուտնտեսության անասնապահական գործի զարգացման և բարելավման մասին ու խնդրեց ոգնել իրեն պատի լրագիր պատրաստելու և լողունգներ գրելու գործում:

— Յես այսոր մտածում էյի այդ մասին, բայց մենակ

զժվար եր գլուխ բերել այդ աշխատանքը. լավ ե, դուք կոգնեք ինձ, — ասաց նա ուրախ-ուրախ:

Մենք սիրով ընդունեցինք այդ առաջարկը և յեռանդով անցանք գործի: Պահեստապետը մեզ թուղթ ու թանաք բերեց և յերեքովս մի քանի հակիրճ, բայց բովանդակալից հոգվածներ գրեցինք, վորոնց մեջ մենք շոշափում, պարզաբանում էյինք գլխավորապես անասնապահության զարգացման հետ կապված հարցերը:


Մեր մաքրագրած թերթիկները Սուքիասյանը խնամքով փակցրեց մի գունավոր ստվարաթղթի վրա: Մնում եր խոշոր տառերով թերթի անունն ու լողունգները գրել: Սակայն դրա համար համապատասխան թանաք ու զրիչ եր պետք: Սուքիասյանը դես ու դեն ընկավ և պահեստատան մի անկյունում կարողացավ գտնել թղթի մեջ փաթաթած սև թանաքի չորացրած կտորներ, վորոնք մանրելով հալեցինք ջրի մեջ և ստացանք մեր ցանկացած թանաքը: Անուշավանը մի բարակ փայտաշեց, դարձրեց սրածայր, գրչի ձև տվեց և սկսեց խոշոր տառերով արտագրել մեր կազմած լողունգները: Պետք ե ասել, վոր Անուշավանը համեմատաբար ավելի գեղեցիկ ձևագրեր ունեւր և ավելի արագ ու վարժ եր գրում:

«ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԱՆԱՍՆԱՊԱՀ»

Այսպես կնքեցինք լրագրի անունը և լողունգների հետ միասին կպցրինք պատին: Ամբողջ այդ աշխատանքը մենք կատարեցինք առանձին յեռանդով ու վոգեկողությամբ: Իսկ Սուքիասյանն աշխատանքի ընթացքում զանազան սրամիտ առակներ եր պատմում և ուրախ կատակներ անում և այդ զվարթ մթնոլորտում իսկի չիմացանք, թե ինչպես անցավ ժամանակը:

Աշխատանքը վերջացելուց հետո մեզ հյուրասիրեցին ճաշով: Գոմշի հիանալի մածուն բերին, անուշահամ սեր ու կարագ և մենք մեծ ախորժակով կերանք:

Ճաշից հետո Սուքիասյանի հետ փոքրիկ զբոսանք կատա-



րեցինք կոլտնտեսութեան գովաստան սարահարթում: Այդ զբոսանքը չափազանց հաճելի յեր լեռնային մաքուր ոգում:

Իրիկնադեմին վերադառնալով զբոսանքից, տեսանք, թե ինչպես մի քանի տնտեսապահ կին ու տղամարդ հավաքվել էին պահեստապետի շուրջը և վերջինս բարձր ձայնով նրանց համար կարդում եր մեր կազմած լրագիրը: Այդ պատկերը, ինչ խոսք, վոր մեզ վրա թողեց խորը տպավորություն և մենք լցվեցինք բերկրանքի և ուրախության բուռն զգացմունքներով:

Մեզ մեծ բավականություն պատճառեց այն գիտակցությունը, վոր կարողացանք մի փոքրիկ մասնակցություն ունենալ տնտեսապահ աշխատավորների կուլտուրական զարգացման գործում:

Մրեն արդեն պահվել եր լեռների կոնակը, յերբ մենք բաժանվեցինք Սուքիասյանից և մեր քայլերն ուղղեցինք դեպի մեր իջևանը: Բաժական ճանապարհ ունեցինք կտրելու:

Փչում եր վերջալուստի գով, անուշ զեփյուռը: Կապուտակ յերկինքը վերեից նայում եր ինչպես ջինջ ու պայծառ հայելի: Իսկ մեր վտանների տակ խոտերն էին փռվել կանաչ գորգի պես:

Մերթ-մերթ հանդիպում էինք գառների խմբերի: Այդ փոքրիկ թռվուռն կենդանիներն անհոգ վազվզում էին կանաչների մեջ, իսկ նրանց հսկող գառնարածները սրինգ էին նուրբ վագում. մի անոռ, հոգեթով յեղանակ:

Ամբողջ կրծքով շնչում էին լեռնային մաքուր, սառնորակ ոդը և ինձ զգում չափազանց առողջ և ուժեղ:

Ուժեղ՝ լեռան բարձունքին պես, և հիասքանչ՝ ինձ շրջապատող բնության նման...

Առանձնապես յես շատ ափսոսացի, յերբ բաժանվեցինք յայլայից:

Չնայած, վոր Ոհան ապերն ու իր կինը շատ էին ուզում, վոր ելի մեանք, բայց մենք շնորհակալություն հայտնեցինք նրանց սրտաբաց ընդունելության համար և մեր վերաբ-

կունենին ու վորսորդական հրացանները վերցնելով՝ ճանապարհ
ընկանք դեպի գյուղը:

Այս անգամ մենք իջանք սովորական յերթեկուցյան ճա-
նապարհով, վոր համեմատաբար ավելի հանգիստ եր և մեծ
մասամբ դարձյալ անցնում եր անտառի միջով:

Մենք քայլում էինք առանց շտապելու, ուրախ կատակ-
ներով: Մանավանդ Սարգիս ասելը մեզ շատ եր զբաղեցնում
գյուղական կյանքից վերցրած սրամիտ ու համով պատմու-
թյուններով:

Այդ մի քանի որվա ճամբորդությունը մնաց իմ մեջ վոր-
պես մի անջնջելի հիշողություն և յես յերբեք, յերբեք չեմ
մոռանա իմ ստացած տպավորությունները...



ՀՀ Ազգային գրադարան



NL0342044

31639

ԳԻՆԸ 1 n. 20 Կ.



ТОРГОМЯН Ц.

Зеленые высоты

На армянск. яз.

ИЗДАНИЕ ГРУЗГИЗА

Тифлис 1935 г.